

ԻՆՉՊԵՍ ՏՂԱ ՈՒՆԵՆԱԼ.

ԱՐՈՒ ԶԱՎԱԿԻ
ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Ռուզաննա Ծարուրյան

*ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Հասցիություն և ազգագրության ինստիտուտ*

Էլ. փոստ ruzantsaturyan@yhoo.com

Բովանդակություն

Ներածություն

Հետազոտության մեթոդաբանությունը

Կանգառ 1. Տղաբերքի ճանապարհային քարտեզի սկզբում

Ինչո՞ւ տղա

Ցորեն ես ցանել, գարի կուզեմ

Մտրակի ու բլիթի սպասումներում. տղայի ծնունդը

Կանգառ 2. Ինչպե՞ն տղա ունենալ. Երեխայի սեռը

կանխագուշակելու պրակտիկաներ

Անցման/կենսափուլային ծեսերի միջոցով

Տեսիլք-երազների միջոցով երեխայի սեռի պլանավորման
պրակտիկաներ

Ուխտագնացությունները

Գուշակություններ

Հղիի արտաքին տվյալների միջոցով

Պահապան միջոցառումներ «պարզև» տղաների համար

Անձնական միջոցով.

Ինսամբի միջոցառումներ

Մոլորեցնելով չար ոգիներին

Կանգառ 3. Ծրագրավորել և պատվիրել տղա

Կանգառ 4. Պատվերի ճշգրտում. Տեսնել և համոզվել, որ տղա է

«Էդ ապարատ քանդեց ընտանիք»

Կանգառ վերջին. Ցանկությունների սրբագրում.

մեզ տղա է պետք և վերջ

Մեռով պայմանավորված հիիության ընդհատումներ
Սրբագրում 1. Վիժեցնող մեթոդներ
Սրբագրում 2. Բժշկական աբորտ
Հետահայաց դիտարկումներ. Տղան պարտադիր ա, աղջիկն՝
անհրաժեշտություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում արու զավակի նախընտրության բարձր ցուցանիշների մասին վկայում են բազմաթիվ հետազոտություններ¹: Մեռերի խախտված համամասնության իրողությունը փաստում է, որ երևույթի արմատներն իրականում ավելի խորն են ու պայմանավորված են մշակութային պատկերացումներով: Ընտանիքում տղա երեխայի մասին երագում են տարբեր պատճառներով. սիմվոլիկ՝ տոհմի հայրագծային շարունակականություն ապահովելու, կայուն տնտեսական ապահովվածություն ունենալու համար և շատ այլ պատճառներով, որոնց անդրադարձել են հետազոտությունները:

Վերջին տարիների հետազոտությունները վկայում են նաև Հայաստանում տղա երեխայի նախընտրությամբ պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատման բարձր տեմպերի մասին: Խնդրի շուրջ հասարակական լայն քննարկումները, միջազգային և տեղական բազմաթիվ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերը որոշակիորեն խթանել են խնդրի մասին հանրային իրազեկվածության և թիրախավորման աստիճանը:

2016թ. նախաձեռնվեց և իրականացվեց օրենսդրական փոփոխություն, որով նախատեսվում է, որ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները 12-ից մինչև 22 շաբաթական ընթացքում արգելվում են: «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման (արորտի) իրավունք մինչև 12 շաբաթական ժամկետը:²

Չնայած փոփոխություններին ու օրենսդրորեն ամրագրված սահմանափակումներին, տղա երեխայի նախընտրության խորը և կայունացած մշակութային սովորույթներով պայմանավորված, հայաստանյան ընտանիքներում շարունակում են կիրառվել պրակտիկաներ, որոնց օգնությամբ

¹ Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ եվ վերլուծություն, Քրիստոֆ Զ. Գիլմոտ, IRD/CEPED Փարիզ, 2013 http://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report_arm.pdf; Կորված հավասարակշռություն. արու զավակի նախընտրությունը Հայաստանում՝ գիրք-նախագիծ, ՄԱԿ-ի քնակչության հիմնադրամ, http://www.un.am/up/library/Son%20preference_project%20book_arm.pdf; Գ. Շահնազարյան, Ս. Հովհաննիսյան, Սեռով պայմանավորված հղիության ընդհատումների համակարգային և մշակութային պատճառները Հայաստանում, World Vision Armenia 2017, http://www.un.am/up/library/Son%20preference_project%20book_arm.pdf:

² ՀՀ օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» <http://www.arlis.am/>

փորձում են պլանավորել կամ կանխորոշել ապագա երեխայի սեռը: Այս պրակտիկաներից որոշները ավանդական են, որոշները սորանուծություններ են: Ենթադրաբար, տղա երեխայի նախընտրությամբ պայմանավորված, հղիությունների արհեստական ընդհատման նորմատիվ սահմանափակումների ներդրմանը զուգահեռ, ավելի կակտիվանա նման պրակտիկաների շրջանառությունն ու կիրառումը:

Սույն հետազոտությունը նպատակ ունի բացահայտել, թե ժամանակակից հայաստանյան ընտանիքներում շրջանառվում են արդյո՞ք ապագա երեխայի սեռի պլանավորման և կանխագուշակման մեթոդներ, ինչպե՞ս և ի՞նչ մեթոդներով են փորձում պլանավորել կամ կանխագուշակել ապագա երեխայի սեռը, ի՞նչ դեպքերում են դիմում այս մեթոդներին և այլ հարակից հարցադրումներ, որոնք կօգնեն գծագրել տղա ունենալու ճանապարհային քարտեզի հիմնական կանգառներն ու պատկերացում կազմել արու գավակի նախընտրության մշակութային պրակտիկաների ու համատեքստի մասին:

Հեղազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության խնդիրներից ելնելով, նախապատվությունը տրվել է որակական հետազոտության գործիքներին՝ խորացված հարցազրույցներ, խմբային քննարկումներ և փորձագիտական հարցազրույցներ:

Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության 4 մարզի 11 համայնքում.

- Արագածոտնի մարզի Թալին քաղաք, Լուսաղբյուր, Ներքին Բազմաբերդ, Արտենի գյուղեր,
- Շիրակի մարզի Գյումրի քաղաք, Մարնաշեն, Կամո գյուղեր,
- Տավուշի մարզի Իջևան քաղաք, Գանձաքար գյուղ,
- Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաք և Գանձակ գյուղ:

Նշված մարզերն ընտրվել են՝ հաշվի առնելով ՎՎ-Հայաստան կազմակերպության կողմից նշված մարզերում «Հոգատարություն՝ հանուն ավասարության» ծրագրի իրականացման հանգամանքը: Յուրաքանչյուր բնակավայրում իրականացվել են խմբային հարցազրույցներ՝ կանանց և տղամարդկանց հետ, անհատական հարցազրույցներ՝ կանանց հետ:

Հարցազրույցները իրականացվել են որակական հետազոտության մեթոդով՝ կիսաֆորմալացված հարցարան-ուղեցույցով՝ բաց հարցերի առաջարկմամբ:

Անհատական հարցազրույցներ անցկացվել են տարբեր տարիքի կանանց հետ՝ ավագ, միջին և երիտասարդ՝ մշակութային պրակտիկաների փոփոխություններին հետևելու նպատակով: Հարցազրույցները, վերծանվելուց հետո, վերլուծության են ենթարկվել ընդհանրացման մեթոդով:

Փորձագիտական հարցազրույցներ են անցկացվել՝ ըստ առկայության, տեղերում մանկաբարձ գինեկոլոգի կամ ընտանեկան բժշկի հետ:

Հետազոտության ընթացքի համար չափազանց կարևոր էր ներգրավված դիտարկման հնարավորություն ստանալը: Հատուկ շնորհակալություն են հայտնում «Գյումրու մոր և մանկան ավատրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի ծննդատան գինեկոլոգ Անժելա Իսահակյանին, ում աջակցությամբ 1 օր ներկա են գտնվել հղիների բժշկական կոնսուլտացիաներին՝ հնարավորություն ունենալով լսել 15 հղիների կարծիքներն ու սպասումները երեխայի սեռի հետ կապված: Հետազոտության իրականացմանը պատրաստակամորեն աջակցել են նաև Գյումրու ծննդատան, Արագածոտնի մարզի Արտենի գյուղի առողջության կենտրոնի, Ներքին Բազմաբերդի բժշկական ամբուլատորիայի, Ապարանի ծննդատան, Տավուշի մարզի Գանձաքար գյուղի բժշկական ամբուլատորիայի ղեկավար և բժշկական անձնակազմերը՝ որպես փորձագետներ ներգրավվելով և իրենց կարծիքներով ու տեղեկատվությամբ կիսվելով:

Հետազոտական աշխատանքների սահուն ընթացքն ու հաջողությունները մեծապես պայմանավորված էին համայնքներում Վորլդ Վիժն կազմակերպության սոցիալական հեղինակությամբ և բարձր ճանաչելիությամբ:

Հատուկ շնորհակալություն են հայտնում ՎՎ-Հայաստան կազմակերպության մարզային թիմերին և սոցիալական աշխատողներին, ում պատրաստակամության և տեղերում դրական համբավի շնորհիվ կայացան հանդիպումներ հետազոտության մասնակիցների հետ:

Հետազոտության ընթացքի դիտարկումներ

Հետազոտության ընդգրկման բոլոր բնակավայրերում մասնակիցները տեղեկացված էին սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հայաստանյան բարձր ցուցանիշների մասին, ինչն անշուշտ արդյունավետ իրազեկման քաղաքականության ցուցիչ է: Որպես ինֆորմացիայի հիմնական աղբյուր նշվում էր հեռուստատեսությունը: Բոլոր մարզերում և բնակավայրերում մասնակիցները համաձայնվում էին մասնակցել հարցազրույցների: Եթե Արագածոտնի և Շիրակի մարզերում տեղական մշակութային սովորություններով պայմանավորված, մասնակիցներն ավելի զուսպ և սակավաբառ էին, ապա Տավուշում և Գեղարքունիքում կանայք ավելի ազատ էին արտահայտվում հետազոտական խնդիրների շուրջ: Ընդ որում Գեղարքունիքի մարզում՝ Գավառում, ավելի քիչ էին տեղեկացված իրենց համայնքներում շրջանառվող իգական սեռի պտղի նկատմամբ իրականացվող «կանխարգելիչ» պրակտիկաների՝ իրավական տեսանկյունից արգելված լինելու մասին, և, հետ-

ևաբար, առավել մանրամասն էին ներկայացնում տղա երեխա ունենալու «ճանապարհային քարտեզը»:

Խառը խմբերում հարցազրույցների ընթացքի դիտարկումները ցույց տվեցին, որ տղամարդիկ ավելի միանշանակ և կտրուկ էին տղա երեխայի նախընտրության հիմնավորումներում, ընդգծված անտարբերությամբ էին մասնակցում աղջիկ երեխաների մասին քննարկումներին: Կանայք ավելի տրամադրված են քննարկումների և նաև հետազոտողի իզական սեռով պայմանավորված՝ հարցի շուրջ իրենց պրակտիկաներով կիսվելուն: Անհատական հարցազրույցներ անցկացվել են տարբեր տարիքի կանանց հետ՝ ավագ, միջին և երիտասարդ՝ մշակութային պրակտիկաների փոփոխություններին հետևելու նպատակով:

Հետազոտության սահմանափակումները.

Ընտրված մարզերին բնորոշ ոչ բոլոր մշակութային/ազգագրական շրջանների ներառումը՝ պայմանավորված հետազոտության ընդգրկմամբ և ժամկետով:

Հետազոտության սահմանափակ ժամկետները, որոնք հնարավորություն չեն տալիս դիտարկել խնդիրները «սեփական միջավայրում» ավելի երկարատև ժամանակահատվածում:

Դիտարկվող խնդիրների զգայունությունը ու ինտիմությունը, ինչը մեծամասամբ ծածկվել է որակական մեթոդների կիրառմամբ: Մակայն միանշանակ է, որ դեռևս կա տեղեկատվություն, որը գաղտնիության, իրավական խոցելիության և հասարակական բարոյականության հետ հակասությունների պատճառով մնում է քննարկումներից դուրս, ինչպես օրինակ, սեռով պայմանավորված հղիության ընդհատումների իրականացման ռեալ մեխանիզմներն ու «ճանապարհային քարտեզը»:

Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հանրային լայն քարոզարշավն անշուշտ ունեցել է իր արդյունքները: Դրական իմաստով այս խնդրի մասին մեղիա տեղեկատվության ակտիվ հոսքն է, ինչը բերել էր հասարակության իրազեկվածության բարձրացմանը և խնդրի գոյության փաստի արձանագրմանը: Հետազոտությունը ցույց տվեց, որ այս լայն քարոզարշավը ունեցել է նաև այլ ազդեցություն. *պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումները թիրախավորելու արդյունքում այն ընտանիքները, ովքեր այնուամենայնիվ իրականացնում են աղջիկ պտուղի «զգումներ», ձգտում են այս տեղեկությամբ չկիսվել հարևանների, ազգականների հետ, ինչի արդյունքում երևույթը ավելի է «թաքնվում» և քննարկումների համար արդեն աստիճանաբար «վերանում»:*

Միաժամանակ, այս երևույթի ընտանեացույնը գրկում է կնոջը, ինչպես նաև ընտանիքի անդամներին կատարվածի էմոցիոնալ վերապրման և ֆիզիկական վերականգնման հնարավորություններից՝ երևույթի քողարկված, գաղտնի լինելու, արագ առօրյա վերադառնալու և «կատարվածը» արագ մոռանալու պահանջով պայմանավորված:

Գենդերային զգայունության խնդիրներով մտահոգվելով, հետազոտության մեջ ի սկզբանե որոշվել է չներառել այն կանանց, ովքեր իրականացրել են պտղի սեռի ընտրություն՝ արբորտի իջոցով, նրանց հետազոտության պատճառով լրացուցիչ չստիգմայավորելու և չճնշելու նկատառումներից ելնելով: Նրանց կողմից կիրառված պրակտիկաների մասին տեղեկատվությունը ստացվել է անուղղակիորեն՝ հանդիպումների ընթացքում՝ առանց անձնականացնելու պատմությունները կամ այլ անձանց միջոցով՝ ներկայացվելով անանուն՝ որպես իրենց կողմից լսված տեղեկատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ կանայք իրենք են ցանկացել կիսվել սեփական փորձառությամբ:



ԿԱՆԳԱՌ 1

Տղաերքի ճանապարհային քարտեզի սկզբում

Էհհ, տղա ունենալու ճանապարհը շնամբ դժվար է...

(Գավառ, կին, 30տ.)

Ինչո՞ւ տղա

«Հիմա առանց պլանավորելու երեխա ունենում են մենակ աղքատ ընտանիքները, քանի որ պետությունը երեխու փող ա տալիս, ունենում են, վարկեր փակում...» (Թալին, Արտենի)

Տղա երեխա ունենալու ցանկությունը բնորոշ է հայաստանյան հասարակությանը: Պատճառները, թե ինչու են մարդիկ ուզում անպայման տղա երեխա ունենալ, քննարկվել են տարբեր միջազգային և տեղական հետազոտություններում. հայրագծային ազգակցական համակարգ, տղաների և ծնողների համատեղ ապրելու մշակութային ավանդույթի կենսունակություն, թույլ զարգացած գյուղատնտեսության պայմաններում տղամարդու՝ որպես աշխատուժի ներգրավման անհրաժեշտություն և այլն:

Միաժամանակ առանձնացվել են այն բոլոր նախապայմանները, որոնք ապահովում են նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. արու զավակ ունենալու շեշտակի նախապատվություն, ընտանիքի միջին կազմի կտրուկ փոքրացում և ծնելիության գործակիցների փոփոխություններ, ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաների մատչելիության աճ: Սրանք էլ իրենց հերթին, պայմանավորված են սոցիալական, ժողովրդագրական, մարդաբանական և տնտեսական, ինչպես նաև բազմաթիվ այլ գործոններով³: Ինչևէ, որոշ հետազոտություններ մատնաշվում են տղա երեխա ունենալու «ճանապարհային քարտեզում» ազգագրական ոչ լիարժեք տվյալների առկայությունը⁴, ինչը

³ http://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report_arm.pdf p. 9-10

⁴ Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում

խոչընդոտում է խնդրի համակողմանի լուսաբանմանը և բարելավման ուղղությամբ քաղաքականության մշակմանը:

Զցանկանալով կրկնել արդեն իսկ արված հետազոտությունների արդյունքները, այս հետազոտության համատեքստում կներկայացվի տղա ունենալու «ճանապարհային քարտեզը» և հատկապես տղա երեխա չունեցող կանանց և նրանց ընտանիքների առջև ծառայած հասարակական/մշակութային մարտահրավերները:

Հետազոտության սկզբից ինձ համար փիլիսոփայական հարցադրում էր, թե ինչպես է կիրը կարողանում «Ֆիլտրել և վերացնել» իր սեփական տեսակին: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ տղա երեխայի նախընտրությունը և դրան հասնելու փորձությունները ի վերջո կնոջից դուրս և ուղղակի կնոջ միջոցով իրականացվող գործողություններ են: Հայաստանում առկա գենդերային անհավասարության մշակութային պրակտիկաների անդրադարձերում տղա երեխայի նախընտրությունը ևս համարվում է աղջիկների, կանանց ոչ լիարժեք արժևորման հետևանք և արդյունք, իսկ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհանտումները՝ գենդերային բռնության ևս մի տարատեսակ՝ որն իրագործվում է ինչպես դեռևս չծնված աղջկա, այնպես էլ աղջիկ պտուղ կրող կնոջ նկատմամբ⁵: Այնքան կարևոր է տղա երեխա ունենալու մշակութային պրակտիկան, որ այն անմիջականորեն ազդում է կնոջ կարգավիճակի, հեղինակության ու հնարավորությունների ընկալման վրա:

Ցորեն ես ցանել, գաբի կուզնւ

Հանրային գիտակցության մեջ տիրապետող է կամ հատուկ բարձրաձայնվում և տիրաժավորվում է այն մտայնությունը, որ կինն է պատասխանատու պտղի սեռի համար՝ հակառակ այն հաստատված կենսաբանական թեզի, որ բացառապես տղամարդու սերմնաբջջիների քրոմոսոմային համադրությամբ է պայմանավորվում երեխայի սեռը:

Կնոջն են մեղադրում, որ աղջիկ և լինում: Կինն էլ, որ թուրք ու մուր չուրի, գնում և մի 10 անգամ էլ հանում, մինչև փղա լինի: (Գավառ, կին, 30 տ.)

Կնոջն են մեղադրում տղա երեխա չունենալու համար: Դեռևս մինչ հղիությունը, հղիության ողջ ընթացքում, ծննդաբերությունից հետո և հատկապես միայն աղջիկ երեխաներ ունեցող կանայք մշտապես քննադատվում են: Թեպետ հարցազրույցների արդյունքները ցույց տվեցին, որ բոլորն էլ տեղեկացված են երեխայի սեռը պայմանավորելու գործում տղամարդու որոշիչ դերի մասին, սակայն հանրային պիտակավորումներ

ժողովրդագրական տվյալներ եվ վերլուծություն... http://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report_arm.pdf, էջ 35:

⁵ A. Voskanyan, Sex-selective abortions as part of gender-based discrimination in Armenian family. <http://ysu.am/files/Anna%20Voskanyan%20pdf%20eng.pdf>

րում այս գիտելիքը չի շրջանառվում: Հատկապես կանայք *«Ո՛վ է պատասխանատու երեխայի սեռի համար»* հարցին շշուկով պատասխանում էին, որ տղամարդը՝ «ցորեն են ցանում, գարի՞ են հնձում» ասացվածքի մեջբերմամբ: ⁶

Անգամ դեռևս չծննդաբերած կանայք, ովքեր ունեն միայն քույրեր, արդեն իսկ հայտնվում են պոտենցիալ մեղավորի դերում, քանի որ ըստ ժողովրդական բանահյուսության, հնարավոր է «մորը քաշի (սմանվի), մենակ աղջիկ բերող լինի»: Հետագայում, արդեն աղջիկ երեխա ունենալու պարագայում, բացառապես կանանց են ուղղվում «մեղադրանքները». *«Իմ աղջիկ որ եղավ, իմ կեսուր ըսավ, քոռցա, վախենամ քաշես քու մոր»* (Թալին) կամ

«Մորն է քաշել, աղջիկ բերող է: Թամբալ (ծույլ) աղջիկ ես, չկարողացար փղա բերես, (Գյումրի):

«Որ աղջիկ ա ծնվում, կնոջ երեսով են փայխա, ասում են ծուխա մարեցիր կամ ասում են իրա մորն ա քաշել աղջիկ բերող...» (Տավուշի մարզ, Գանձաքար):

Իսկ տղա ունենալու դեպքում կնոջը գովում են *«Հորդ փունը շեն մնա, մեջքդ դալար մնա»* և այլ արտահայտություններով:

Հայրիշխանական հասարակական կարծրատիպերով պայմանավորված տղամարդիկ ևս «հավատում են» երեխայի սեռը պայմանավորելու կանացի հնարավորություններին և իրենց վարքը աղջիկ երեխայի ծնվելու պարագայում կարգավորում համաձայն այս տեսանկյան. *«Ես ինչը կրնամ աղջիկ ունենամ»* (Գյումրի, տղամարդ):

Աղջիկ երեխայի թերարժեքվորման պրակտիկաներում միայն աղջիկ երեխա ունեցող տղամարդկանց մասին ծաղրական բանաձևերի առկայության պայմաններում տղամարդիկ ձգտում են խուսափել նման իրավիճակներում հայտնվելուց.

Ես մի հղի ունեի, առաջին աղջիկն ունեցան, հայրը թաղում հայրնի փղա էր, երեխուն ծննդաբնից փունն չէր ուզում փանել, ասում էր մայլեն (թաղամասում) ընձի կրսեն աղջիկ ես ունեցել: (Գյումրի, գինեկոլոգ)

⁶ Այս ասացվածքը թեպետ ուղղակի սերմի և դրանից դուրս եկող պտուղների տարբերության անհնարինության մասին է, սակայն հիմքում դարձյալ ունի աղջիկ երեխայի թերարժեքվորման մասին ուղերձ: Հայոց մշակությունում ցորենը միշտ համարվել է ավելի բարձրարժեք սերմ, քան գարին: Այս պարագայում տղա երեխայի նմանեցումը ցորենին, իսկ աղջկա նույնականացումը ցորենից ցածրարժեք հացաբոյսի՝ գարու հետ, ևս ցուցադրում են տղա երեխայի նախընտրության խորը մշակութային արմատները:

Կամ

Ախպերս 3 աղջիկ ունի, ամեն երեխու ծնվելուց առաջ հերս ախպորս կըսեր տիս կեր, ախպերս թե զզվիմ գը, հերոն օր երրորդ աղջիկը ունեցամ, հերս կըսեր, ըբը հըմի չես զզվի քեզնից, որ 3 աղջիկ ունիս: (Շիրակի մարզ, Ամասիա, տղամարդ)

Հատկապես միջն տարիքի կանայք հաճախ են հիշում պատմություններ, թե ինչպես են տղամարդիկ անտեսել երկրորդ կամ հաջորդ աղջիկ ծննդաբերած կնոջը՝ անգամ չայցելելով ծննդատուն կամ նրանց համար սնունդ չտանելով:

«Իմ երրորդ աղջիկը որ 1979 թվին ծնվեց, մարդս չեկավ հիվանդանոց, ինքը մեխանիկ էր աշխատում, միանգամից փունս առավ ու գնաց Ռուսաստան, հերոն մի 6 ամիս հերոն եկավ, կեսրարս երեխուն ցույց փվեց, երկար ժամանակ չէր գրկում, չէր սիրում էդ երեխուն»: (Տավուշ, Իջևան, կին, 64 տարեկան)

Կանայք ևս շատ են ձգտում անպայման տղա ունենալ, քանի որ դա իրական հնարավորություն է ընտանիքում դիրքավորվելու, կարգավիճակն ամրապնդելու և ապագայի համար կայունության երաշխիք ունենալու: Ընտանիքներում երիտասարդ կանանց/հարսների ավելի ստորադասված և ենթակա դիրքով պայմանավորված «տղա ունեցավ, ոտքը տեղ բռնեց» արտահայտության արժեքը նկատվում է նաև մեր օրերում. «*Ես մեկ փղս ունեմ, փեգորս կինը՝ մեկ աղջիկ, և կունկրեար իմ սկեսրայրի համար ես առավել ու գերակա դիրք ունեմ, ինքը ինձ մեծ փեղ է փայխս ու ավելի լավ վերաբերվում»*, - պատմում է գյումրեցի 25 տարեկան կինը, ով ապրում է ամուսնու ծնողների և եղբոր հետ նույն տանը և կարող է առօրեական հարթություններում գնահատել վերաբերմունքի ու վարքի տարբերությունները:

Հատկապես առաջինը աղջիկ ծնվելուց հետո ընտանիքներում անդադար են դառնում խոսակցությունները տղա երեխայի սպասման մասին.

Մեծերն ընտանիքում կարող ա բառերով չասեն, բայց գործողություններով, պահվածքով անընդհանր հիշեցնում են, որ փղս թոռ է պերք, իսկ ով փղս չունի ասում են քոոցում ընտր, աղջիկ ունեցամ: (Թալին, տղամարդ, 3 աղջիկների ու մեկ տղայի հայր)

Այսօրինակ մշակութային պատկերացումներով պայմանավորված պարտադրող սոցիալական ճնշումները լարվածություն են առաջացնում ընտանեկան հարաբերություններում և կանայք իրենք՝ ձգտելով խուսափել այս սպասվող անհաշտ ու լարված գրույցներից, շատ են ձգտում հնարավորինս շուտ իրականացնել իրենց հիմնական առաքելությունը՝ տղա ունե-

նալը. «Առաջին հղիությունս ա , դե մեկ ա ինչ կունենամ, բայց երևի ավելի շատ փողա, որ էդ դարդից պրծնիմ» (Գյումրի)», անկեղծորեն պատմում էր գինեկոլոգիական խորհրդատվության այցելած երիտասարդ կինը:

Գինեկոլոգները իրենց ընդհանրական գնահատականներում ևս շեշտադրում են այս խնդիրը, երբ կանայք են պարտավորված ու պատասխանատու զգում տղա երեխա ունենալու համար. «Երեկ մեկն եկավ, առաջին երեխեն է, ասում է բժիշկ ջան, փղմ է: Ասում եմ ինչիդ է պետք, պարասխանում է հրբը չսեն փողա է ունեցել»: (Գյումրի, գինեկոլոգ, տղամարդ):

Կամ. «Անգամ բժշկուհի ունենք, ասում ա հրբը մարդուս համար մի հասր փողա չբերեն»: (Գյումրի, գինեկոլոգ, կին)

Տավուշի մարզի գյուղերից մեկի ընտանեկան թերապևտն էլ հիշում էր, թե ինչպես էր իրենց համագյուղացի կինը 3 աղջիկ ունենալուց հետո առողջությամբ սպառնացող վտանգի պարագայում համարձակվել տղա ունենալ. «ասում էր մեռնեմ էլ, ամուսնուս համար մի փողա պիտի բերեմ»:

Հայաստանյան բարձր միգրացիոն ցուցանիշների պայմաններում, հատկապես հետազոտության մեջ ընդգրկված մարզերում տղա ունենալով կանայք ակնկալիք են ստանում, որ ամուսինը չի թողնի ընտանիքը՝ այլ ընտանիք կազմելու նպատակով, կամ չի դադարեցնի գումարային տրանսֆերները. «Բարեկամիս կինը գնաց բախար գուշակողի մոտ, իրա ամուսինը խոսքան էր, ուզում էր իմանա, ոնց անի, որ փողա ունենա ու ամուսինը իրա մոտ մնա: Վերջը սրացվավ փողա ունեցավ, դե ամուսինն էլ հիմա կապը պահում ա» (կին, Գեղարքունիք, Գավառ)

Տղամարդու՝ որպես պտղի սեռն ապահովողի մասին ուղերձի ակտիվ հանրայնացումը կարող է նպաստել կնոջը՝ որպես «տղա բերողի» հիմնական մեղավորի մասին առասպելի ապակառուցմանը և հանրային քննարկումների առանցքի փոփոխմանը:

Մտրակի ու բլիթի սպասումներում. տղայի ծնունդը

Եթե տղա չունենալը կնոջն ուղղված մեղադրանքներից զատ ուղեկցվում է նաև նրա նկատմամբ անտարբեր վերաբերմունքի ու վարքի դրսևորումներով և ամուսնուց նվազագույն ակնկալիքների սպասումներով, ապա տղա ունենալը՝ հատկապես սպասված, ուղեկցվում է կնոջ հանդեպ վերաբերմունքի ու վարքի բարելավմամբ: Ընդ որում վերաբերմունքի տարբերությունը սկսվում է դրսևորվել անգամ պտղի սեռի բացահայտման պահից. առավել խնայող վերաբերմունք հղիի նկատմամբ, նրա ցանկություններին, սննդային նախընտրություններին դրական արձագանքում, հղիության հետ կապված զանգատների նկատմամբ ուշադրություն, կենցաղային պարտականությունների հնարավորինս վերաբաշխում, տան անդամների կողմից հղիի էմոցիոնալ տրամադրություն-

ների գիտակցում և այլ բազում առօրեական դրսևորումներ: Այս բոլորը ինչպես հղիի, այնպես էլ հետազոտության մասնակիցների կարծիքով չեն իրականացվում օրինակ երկրորդ կամ երրորդ աղջիկ երեխայի սպասող հղիի նկատմամբ:

Անգամ մանկաբարձ գինեկոլոգներն են փաստում, որ կանայք էլ գիտակցելով իրենց կարևոր դերակատարումը տղա երեխա «պարզելու» գործում հաճախ շահարկում են հղիության հետ կապված խնդիրները՝ ավելի թանկ «վաճառելով տղաբերքը»:

Հայաստանում դեռևս խորհրդային տարիներից հաստատված սովորույթի համաձայն երեխայի ծնվելու լուրը հորը և սպասող բարեկամներին փոխանցող բուժակին գումար են տալիս՝ որպես շնորհակալություն՝ «մադարիչ»: Հետազոտության ընթացքում գրանցված նյութերը ցույց տվեցին, որ տղա երեխաների ծնվելու դեպքում երեխայի հարազատները ավելի «առատաձեռնություն են» ցուցաբերում, քան աղջիկ երեխայի ծնվելուց.

Մի մարդ կար մեր գյուղում, 4-րդ աղջիկը որ ծնվեց, ես ու սանհիտարկան իրար մեջ վիճում էինք, թե ով գնա լուրը հայտնելու: Սանհիտարկեն ինձ ասեց, էդ ուրիշ ժամանակ վազում ես լուրը տալու, դե հիմա էլ գնա: Մտիպված գնացի, հայրը տեսավ ասում ա հը: Ասում եմ ախպեր ջան, մի սպիտակ ... Ասում ա հը Ես էլ դիսկ չեմ անում ասեմ, թե էլի աղջիկ, շարունակում եմ, թե բոյով, սիրուն... Հերը ջղայնացած, թե ով ա: Մտիպված ասեցի աղջիկ... Համարյա հարձակվել էր վրես: (Արագածոտնի մարզ, մանկաբարձ)

Ծննդատան անձնակազմի ներկայացուցիչներն էլ թեպետ սկզբնապես հերքում են ժամանակակից տարբերակված դրսևորումների առկայությունները, սակայն հարցադրման արդյունքում այնուամենայնիվ հիշում են տարբեր պատմություններ, թե ինչ ակնառու ուրախություն ու ոգևորություն է տիրում տղա երեխայի ծնվելու ժամանակ:

Ծննդատանից դուրս գրվելը ևս ժամանակակից իրողություններում ուղեկցվում է որոշակի տոնակատարություններով: Հիմնականում ընտանիքի առաջին երեխային ծննդատանից տուն ուղեկցվում են տոնական միջոցառումներով՝ նորածնի համար հատուկ զգեստ են պատրաստում, հարազատները նկարահանում են ընթացքը, փուչիկներ ու ծաղիկներ են բերում ծննդատուն: Ինչպես հետազոտության մասնակիցների, այնպես էլ բուժանձնակազմի գնահատականները ցույց են տալիս, որ հատկապես սպասված տղա երեխային ծննդատանից ուղեկցում են ավելի տեսանելի տոնականությամբ, տղա երեխայի ծնվելուց հետո ծննդատան բակում սպասողների խմբի բուռն ուրախությամբ: Գյումրիի ծննդատներից մեկում անգամ մեքենա վարել չիմացող ծննդկանին տղա ունենալուց հետո ամուսինը ավտոմեքենա էր նվիրել՝ այն տոնական փաթեթավորմամբ բերելով ծննդատան բակ:

Ես, ամուսինս, 4 աղջիկս, կեսուրս, կեսարս, կեսուրիս կեսուրը ապրում էինք մի փոքր փան մեջ, ամուսինս ասում էր մինչև փղա չունենաս, քունը չեմ սարքի, երբ փղաս հոկտեմբերին ծնվեց, նոյեմբերի վերջին մեր փան երկրորդ հարկը արդեն պատրաստ էր,-ի կենսակերպի բարելավումն է հիշում Գայյա տատիկը, ով ապրում է Արագածոտնի մարզում:

Չնավորված սովորույթի համաձայն տղա ծննդաբերած կնոջը ամուսինը կամ սկեսուրը ավելի հաճախ են ոսկյա զարդ նվիրում, ինչը հայաստանյան պրակտիկաներում համարվում է բարձր գնահատանքի ցուցանիշ: Մինչդեռ հատկապես երկրորդ և հաջորդ աղջիկ երեխաների ծնունդը սովորաբար ավելի «աննկատ» է անցնում. *«Ամուսինս 3 աղջկերքիս համար մաղարիչ չի էլ արել, իսկ փղիս համար՝ շար շուքով»* (կին, Տավուշի մարզ, Գանձաքար):

Անգամ աղջիկ երեխա ծնվելու դեպքում փոխվում է նաև շնորհավորանքների բովանդակությունն ու ձևը.

«Ոչինչ, կարևորը առողջ լինի, ոչինչ երկրորդը աղջիկ է , սրիպված երրորդն էլ կունենաք» արտահայտություններով, որոնք հստակ ցուցում են հասարակությունում կարծրացած մշակութային կարծրատիպերի մասին. *«Մեր հարևանուհին 3 փղա ուներ, մայրս 3 աղջիկ, երբ հարևանուհու առաջին թոռնիկը աղջիկ ծնվեց, մայրս ասեց այքներս լույս, հարևանուհին նեղացած ձայնով պատրասխանեց, թե մարդու դժբախտության վրա պետք չի ուրախանալ...»* (Տավուշի մարզ, կին, 30 տարեկան.):

Սպասված տղա երեխայի (այսինքն երբ ընտանիքում կա աղջիկ երեխա) ծննդյան առթիվ բուռն է կազմակերպվում հատկապես հոր կամ պապիկի կողմից «աչքալուսանքը», երբ ընկերները, հարազատները հավաքվում են նշելու երեխայի ծնունդը: Մինչդեռ հատկապես երկրորդ աղջկա ծնվելու առթիվ առավելապես երեխայի մայրը զգում է ընտանիքի անդամների, հարազատների, հարևանների «լուռ դժգոհությունը», որն ուղեկցվում էր ժլատ և այնուամենայնիվ տղա երեխայի սպասմանն ուղղված բարեմաղթանքներով. *«ոչինչ, հաջորդը փղա կլինի կամ ոչինչ, մի նեղվեք, աղջիկ բերողը փղա էլ կբերի»*

«Երբ երկրորդ աղջիկս ծնվեց, կեսարս այքի լուս չասեց, իսկ երբ երրորդը ծնվեց, ընհանրապես հերս չիոսաց»,-պատմում է Շիրակի մարզի գյուղերից մեկում ապրող կինը, ով 4 աղջիկ ունենալուց հետո ի վերջո իրականացրել էր կեսարի երագանքը և տղա էր ունեցել, ում կոչել էին սկեսարյի անունով:

Այսօրինակ մշակութային կաղապարների առկայության ու շրջանառության պայմաններում կանայք էլ ծանոթ լինելով իրենցից հիմնական ակնկալիք-պահանջին, ձգտում են հնարավորինս արագ իրականացնել այն՝ դիմելով տարբեր փորձությունների ու հնարքների:



ԿԱՆԳԱՌ 2

Ինչպե՞ս տղա ունենալ. Երեխայի սեռը կանխագուշակելու պրակտիկաներ

...yan ▶ Armenian Parents' Corner
2016 · 11

Barev jez. Mayrikner jan, uzum em aroxj TXA balik unenal. Kogneq gtne!
lav ginekologi, vor apaga yerexayi |ser|@ hashvi kam ayd harcunm ogni.



8 մեկնաբանություն

Այսօրինակ գրառումներն ու բանավոր հարցումները համատարած են Հայաստանում: Տղա ունենալու երազանքով ապագա մայրերը, նրանց սկեսուրները, մայրերը, բարեկամները, հարևաններն ու ընկերները փնտրում են հավաստի ու փորձված մեթոդներ:

Հետազոտության սկզբում մտավախություն ունեի, որ հետազոտական կանխավարկածը չի հաստատվի և կպարզվի, որ հիմնական մեթոդը ուլտրաձայնային հետազոտությունն է: Սակայն հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ տղա ունենալու «ճանապարհային քարտեզի» կանգառները բազմազան են: Կա կոնկրետ շրջանատվող գիտելիք և պրակտիկաների համախումբ, որոնց միջոցով մարդիկ ձգտում են պլանավորել ապագա երեխայի սեռը՝ հիմնականում արական: Հատկապես գյուղական բնակավայրերում, որտեղ իրականացվել է հետազոտությունը, երբևէ չի ներկայացվել որևէ դեպք, երբ ծնողները դիմել են տարբեր հնարքների աղջիկ երեխայի ծնունդը պլանավորելու նպատակով:

Գրանցված պրակտիկաներից որոշները փոխանցվում են ավանդաբար սերնդե սերունդ: Որոշներն ավելի ժամանակակից են և կապված են բժշկության, տեղեկատվության մատչելիության աճի և մասսայականացման հետ:

Անցման/կենսափուլային ծեսերի միջոցով

Անցման ծեսեր են համարվում մարդու նոր սոցիալական կատեգորիայի կամ ստատուսի ձեռք բերումն ամրագրող ծեսերը⁷, ինչպես օրինակ ծնունդը, ամուսնությունը, հասունությունը, մայրանալը/հայրանալը և մահը:

Այս շարքում ամենատարածվածը և «ճանապարհի» սկիզբը պայմանավորող սովորույթը, որը վերարտադրվում է նաև ժամանակակից իրողություններում, հարսանիքի ժամանակ **նորահարսի գիրկը տղա երեխա տալու սովորույթն է**, հարսին ուղղված այն ակնկալիքով «*որ հաջորդ տարի էլ ժամանակ մի դռն փրկես*» Ամուսնանալու և ընտանիք կազմելու՝ արու գավակի միջոցով վերարտադրություն ապահովելուն ուղղված այս անցումային, շեմային ծեսն այնքան է հիմնավորված մշակութային պատկերացումներում, որ վերափոխման չի ենթարկվում. «*մեր հարևանի տղայի հարսանիքի ժամանակ հարսը առաջինը մի աղջիկ երեխու գրկեց, ու հետո առաջին հղիությունը վիժեց, թե հիմա դա էր պարճառը, թե չէ, չեմ կարա ասեմ, բայց իրանց տարիկը շատ էր նեղվել, որ հարսը առաջինը աղջիկ էր գրկել*» (Կին, Թալին):

Ըստ էության ավանդական հարսանեկան ծիսաշարի տարբեր փուլերում էր տղա երեխայի մասնակցությունը կարևորվում: Գեղարքունիքի մարզում սովորույթ կար, որ հարսանեկան շորերը ձևելիս. «դիտմամբ դրսից մի տղայ էին ներս բերում, իսկ կեսրանց տուն առաջին անգամ մտնելիս՝ մի արու երեխայ էին գրկին դնում, որպեսզի իրենք էլ տղա գավակ բերեն»⁸: Կամ հարսին տանող ձիու վրա տղա երեխա էին նստեցնում: Այս բոլոր միջոցառումներն ի վերջո կոչված էին հարսի գլխավոր անելիքի՝ որդեծնության ապահովմանը: Գեղարքունիքի մարզում այնքան տիրապետող է տղա երեխա ունենալու ձգտումը, որ այն արտահայտվում է նույնիսկ ընտանիքում ծնված երեխայի ատամհատիկի ժամանակ: Ատամհատիկը նշում են երեխայի առաջին ատամը դուրս գալու ժամանակ՝ փաստելով երեխայի հասունացման հերթական փուլը: Ատամհատիկի ժամանակ երեխայի առջև դրված տարբեր իրերի միջոցով փորձում են կանխորոշել երեխայի հետագա մասնագիտական ընտրությունը: Ի հավելումն այս փորձառության, Գավառում պատմում էին, որ երեխային առաջարկվող իրերի շարքում նաև դանակ են դնում և եթե փոքրիկը դանակն է վերցնում, դա նշանակում է, որ ընտանիքում հաջորդ նորածինը տղա է լինելու:

⁷ Ван Геннеп А. Обряды перехода — М. : Восточная литература, 1999.

⁸ Լալայան Ե., ԱՀ, Նոր-Բայազետի գաւառ, 1907, գիրք 16, էջ 275:

Տեսիլք-երագների միջոցով երեխայի սեռի պլանավորման պրակտիկաներ

Այս պրակտիկաները աստիճանաբար նվազում են, սակայն դրանք հիշվում և կարևորվում են պտղի սեռի ավելի հավաստի ստուգումներից հետո: Երագներում սրբերի հայտնվելը և երեխա ունենալու մասին հուշումների ներկայացնելը սրբի կողմից մեկնաբանվում է անպտղության պարագայում՝ ուղղակի երեխայի ծնունդ, իսկ տղա երեխայի սպասման դեպքում՝ որպես արու զավակի ծնվելու հուշում:

«Ես չգիրեմ, որ աղջիկս հղի էր, երագիս մի մարդ եկավ մորությամբ ու գավազանով, ասեց, որ երեխա ա ծնվելու: Հեղո իմացա, որ աղջիկս հղի ա, ծնվեց, ու Գևորգ դրեցինք՝ ի նշան սուրբ Գևորգի»: (Կին, Տավուշի մարզ, Իջևան)

Ուխտագնացությունները

Այցելությունները դեպի սրբավայրեր, որոնք հայտնի են իրենց երեխա և նաև տղա երեխա «պարզևելու» գործությամբ, ավանդաբար համատարած էին, սակայն ներկայումս կորցնում են իրենց նշանակությունը երիտասարդների շրջանում: Թեպետ քիչ չեն պատմությունները, թե ինչպես են երկար տարիների՝ հիմնականում առասպելական համարվող 7 տարի ուխտագնացություններից հետո ծնվել սպասված տղաները. *«Ինձի սրեղի կնգորիք ըսին, որ սուրբ պրի երթամ, 7 տարի ուրով Սուրբ Հովհաննես եմ գնացել, որ 4 աղջիկներիցս հեղո տղա ունենամ»*, -պատմում է տիկին Գալյան, ում տղան ի վերջո ծնվել է ուխտի գնալու արդյունքում, սակայն ս. Գևորգի տոնին: Տղային անվանել են Գևորգ, սակայն քանի որ համոզված են եղել, որ տղային պարզևել է Ս. Հովհաննեսը, տղայի ծնվելուց 35 տարի անց 2011 թվականին Սուրբ Հովհաննեսի մատուռի մոտ շնորհակալական խաչքար են տեղադրել:

Հատկապես Շիրակի մարզում, Թալինում, Տավուշում երեխա պարզևելու գործությամբ հայտնի էր և այժմ էլ հայտնի է Լոռու մարզի Հարթագյուղի Ս. Հովհաննեսի մատուռը, որտեղ ավանդաբար տանում էին էպիլեպսիայով հիվանդ երեխաներին, և խորհուրդ էին տալիս գնալ անպտուղ կանանց կամ տղա երեխայի փափագով տարված կանանց, ինչպես նաև Շիրակի մարզի Հացիկ գյուղի՝ Թովառուրի Ծակ քարը⁹: Հիմնականում ս. Հովհաննես այցելում էին Աստվածածնի վերափոխման տոնին, կամ անհատական այցելությամբ՝ լուռ, երբեմն ոտաբորիկ հաղթահարե-

⁹ Հ. Աբրահամյան, Շիրակի վարդավառյան ուխտավայրերը (համառոտ նկարագիր), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, XV, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2012, էջ 167: <http://shirak.asj-oa.am/456/1/159-168.pdf>:

լով բարձունքը: Կանայք իրենց հետ ավել էին վերցնում, որով ավլում էին Ս. Հովհաննեսի բակը՝ իբրև նրան ծառայելով, նվերներ էին մատուցում, գառ զոհաբերում: Ծակ քար այցելությունների ժամանակ «վերջապես» ծնված տղաներին անցկացնում էին քարի միջով, որից հետո նա համարվում էր պաշտպանված: Տավուշի մարզում գրանցված մի պատմություն էլ հուշում է, որ երկար սպասված տղաներին ձգտում էին պաշտպանել բոլոր հնարավորություններով. «*Ամուսինս 5 քրոջ վերջին ախպեր ա, որ ծնվել է, իրանց տանը մի կավի պուլիկ (կճուճ) ա եղել, դրա տակը կտրել են ու իրանց էդ պուլիկի միջով անցկացրել*»: Երևակայական սահմանների ու փորձությունների, մի աշխարհից մյուս աշխարհ անցնելու ծեսերի միջոցով հայոց մշակույթում պահպանել են հիմնականում տղա երեխաներին, որպես ընտանիքի ավելի գնահատված ու կարևոր անդամների:

Գուշակություններ

Սպասվող պտղի շուրջ գուշակությունները մշտապես ուղեկցել են կնոջը: Հայկական ավանդական հասարակությունում այսօրինակ գուշակություններն ավելի բազմազան էին և շրջանառվում էին կյանքի բոլոր իրավիճակներում: Ժամանակակից իրողություններում ևս գուշակություններին, երագներին տրվում է հատուկ նշանակություն¹⁰, հատկապես սպասվող կարևոր իրադարձությունների համատեքստում, ինչպիսին երեխայի ծնունդ է և հատկապես տղա երեխայի սպասելիքը: Տղա երեխայի մասին երագող ընտանիքներում ուշադրություն են դարձնում ամենատարբեր սիմվոլիկ երևույթների, որոնք միգուցե առօրյա կյանքում աննկատ մնային:

Տղա երեխայի սպասումներում մեծ կարևորություն է տրվում **երագների մեկնությամբ**: Եթե առասպելական, աստվածային կերպարներով երագները մեկնվում էին բացառապես հօգուտ տղա երեխայի սպասվելիք ծնունդի, ապա առօրյա երագների բովանդակության մեկնությամբ որոշում էին տղա, թե՛ աղջիկ է ծնվելու. դանակ, գյուղատնտեսական աշխատանքային գործիքներ տեսնելու դեպքում համարվում էր որ տղա կծնվի, մինչդեռ ասեղ, կոճակ, խնձոր տեսնողները աղջիկ էին սպասում. «Երագիս մեր բակում փոքր դանակներ էին թափված, հավաքեցի, հետո բաժանեցի քրոջս ու երեքն էլ ինձ պահեցի, ես ունեցա երեք տղա, ինքն էլ երեք...» (կին, Ապարան): Ընդ որում երեխայի սեռի մասին երագները «տեսնվում էին» ոչ միայն հղիի, այլև նրա ընտանիքի անդամների, հարևանների ու ազգականների կողմից և անպայման դրանք մասին պատում էին հղիին:

Մոգական – հմայական գուշակություններ սպասվող երեխայի սեռի

¹⁰ Антонян Ю., Магическое целительство и гадание в Армении (диссертация на соискание ученой степени кандидата исторических наук), Ер., 2007

մասին արվում էին ինչպես պտղի սեռը կանխագուշակելու, այնպես էլ տղա երեխա «պատվիրելու» համար: Տարբեր բախտագուշակներ՝ **բախտ նայողներ, մոմ թափողներ, աղոթք անողներ, թուղթ ու գիր անողներ, անգամ աստղագետներ** առաջարկում էին և են իրենց հմտությունները՝ տղա երեխա պլանավորելու «ճանապարհային քարտեզում»: Եթե ավանդական հասարակություններում համայնքային կապերով և կենսակերպով պայմանավորված այսօրինակ գուշակությունները արվում էին համայնքի անդամների համար այս շնորհներով օժտվածների կողմից, ապա այսօր արդեն պահանջարկով պայմանավորված՝ շրջանառվում են կոմերցիոն առաջարկներ: Ժամանակակից իրողություններում, երբ հանրային դիսկուրսում խրախուսելի չի համարվում բախտագուշակությունների դիմելը, այս ծառայություններից օգտվում են հնարավորինս գաղտնի, առանց հանրայնացնելու, ինչն էլ նպաստում է ծիսական շղթայի շարունակությանը: Գեղարքունիքի մարզում, հատկապես Գավառի Գանձակ համայնքում մեծ ճանաչում ունի բախտագուշակ Վարսիկը, ով իր հարսի նկատմամբ բռնության փորձերի կիրառումից զատ¹¹ հայտնի է նաև տղա երեխա պարզելու շնորհով. «*Իմ բարեկամը եկավ Վարսիկի մոտ, նա նայեց, ասեց, թե որ օրը հղիանա, որ տղա լինի: Ու թուղթ ու գիր արեց /մոզական-հմայական միջոցներ/, որ իր ամուսինը Ռուսաստանից գա: Ու էդպես էլ եղավ*»: (կին, Գավառ, Գանձակ համայնք):

Թալինի Ներքին Բազմաբերդ գյուղում էլ դեռևս հիշում են, թե ինչպես էին մարդիկ մի «սև հավ» գտած, գրկած գալիս իրենց գյուղացի Մոսոյի մոտ՝ գուշակություններ անելու «*Իր մոտ պահվում էր Էրզրից բերված սուրբ գրքեր, թուղթ ու գիր էր անում, որ տղա ունենային*»:

Սուրճի բաժակի մրուրով գուշակությունները ևս ուղեկցում էին տղաբերքի ճանապարհին: Սուրճի բաժակի նստվածք-մրուրով գուշակություններ անում էին ինչպես հատուկ այս գործում մասնագիտացած կանայք, այնպես էլ «սիրողական» զբաղվողները: Եթե «մասնագետների» գուշակությունները ավելի դժվար էր կազմակերպել, պետք էր հատուկ պայմանավորվել, միգուցե նաև նվեր պատրաստել, ապա կանանց ժամանցային սուրճ խմելու խմբերում հաճախ էին դիմում գուշակության այս ձևին. սրճեփում եփված սուրճը խմելուց հետո բաժակը շրջում էին փոքրիկ ափսեի վրա, նստվածը հոսում էր և բաժակի պատերին առաջացնում տարբեր պատկերներ, որոնք էլ մեկնաբանելով՝ փորձում էին գուշակություններ անել. «*Մի օր ես ու ընկերուհիս դաշտից տուն էինք գնում, ասեց գիրքես երեխա եմ սպասում, երկու աղջիկ ուներ, մորածում էր էդ էլ ա աղջիկ, ասեց ուզում եմ հանես, ես ասեցի արի գնանք մեր տուն կոֆեիդ բաժակը նայեմ: Նայեցի, ասեցի հասարար տղա ա, մի հանի, դե էս ժամանակ էլ էիտ չկար, ինձ հավարաց ու չհանեց: Հիմա ամիսներն անց*

¹¹ <http://hetq.am/arm/news/30981/bakhtagushak-varsiki-khoshtangumneri-entarkvats-harsn-ardarutyun-e-pntrum.html>

նում են, իմ սիրտը կանգնում աս, ասում եմ, բա դ՛ր աղջիկ ծնվի: Ու բարեբախտաբար փղա ծնվեց, հիմա հենց էդ փղին փեսանում եմ, հիշում եմ որ դրա պարճատը ես եմ» (Կին, 50 տարեկան, Ապարան):

Հղիի արտաքին տվյալների միջոցով

«Մեր հարևանը երրորդովը հղի էր: Երեք անգամ գնացել էր Երևան, չէր սրացվել էխո անել: Էհսս մի օր մեր գյուղում իր փանդի հանդիպում աս մեր գյուղացի մի կնգա, ով կարողանում էր փորը շոշափելով իմանաք երեխի սեռը: Նա էլ առանց իմանալու արա դարդը, ձեռը քսում աս փորին ու ասում աս, որ աղջիկ աս: Դե էն աս հետո էլ գնաց էխոյի, էլի ասին աղջիկ աս, հանեց» (Կին, Գանձաքար, Իջևան):

Հղիի փորի դիրքով, արտաքինի փոփոխությամբ երեխայի սեռը որոշեն ունի շատ հին պատմություն ու ավանդույթներ: Իհարկե, ժամանակակից իրողություններում այսօրինակ գուշակությունները որոշիչ չեն համարվում տղա երեխա ունենալու ճանապարհին, սակայն ակտիվորեն շրջանառվում են հղիության ընթացքում՝ ժամանցային և հետաքրքրության նկատառումներով: Ավանդական կենցաղում տարածված ու փոխանցված սովորություններից է, որ եթե հղի կինը քորոց, ցախավել, թիակ գտնի՝ տղա է ունենալու, իսկ եթե ասեղ, ավել, մատնոց՝ աղջիկ¹²: Այս գուշակություններից որոշները կենսունակ են նաև մեր օրերում «Ես մեր ընտանիքում առաջին երեխան եմ; Երբ մայրս ինձանով հղի է եղել, հայրս գործից գալուց ճանապարհին մի ասեղ է գրել, բերել է փուն, հորս մայրը բացատրել է, որ ասեղը աղջկա նշան է: Հայրս փարել է և ասեղը դրել այն նույն փեղը, որ փեղից գրել էր, բայց փաստորեն օգուտ չունեցավ, ես ծնվեցի» (23 տարեկան կին, Գավառ):

Հղիի արտաքին տեսքի, ինքնազգացողության և պտղի վարվելաձևի գուշակությունները ևս բազմազան են. «աջ յան /կողմ/խաղա՝ տղայ է լինելու , եթե ձախ՝ աղջիկ» (Ն. Բազմաբերդ, Թալին)

«Թե երեխան ձկնի պես լող է փալիս՝ արու է, թե գորտի պես պըպըզած է՝ աղջիկ»¹³:

Եթե հղի կնոջ երեսը պայծառ է, ասյա ծնվելիք երեխան արու է, իսկ եթե «մթորուկ», այսինքն փխտր՝ աղջիկ¹⁴:

Նույն տրամաբանությամբ թալինցիների շրջանում համարում են, եթե խորոտկություն տվե երեխուն, կոթություն /տղեղություն/ տվե մամուն, ուրեմն աղջիկ է ծնվելու:

¹² Լալայան Ե., ԱՀ, Մուշ-Տարոն, 1916, գիրք 26, էջ 177:

¹³ Լալայան Ե., ԱՀ, Գանձակի գավառ, 1900, գիրք 2, էջ 275:

¹⁴ Լալայան Ե., ԱՀ, Մուշ-Տարոն, 1916, գիրք 26, էջ 176:

Եթե մայրը հղիության ժամանակ վատ է զգում, աղջիկ է, հիմա է փանջում, որ հեպո չփանջի (Տավուշի մարզ):

Հղիի փորը վերև լինելու դեպքում տղա էին սպասում:

Տարիքով ավելի մեծահասակները հետազոտության ընթացքում հիշում էին, թե մինչև տնոգրաֆիկ հետազոտության մուտք գործելը ինչպես էին հմուտ մանկաբարձ-գինեկոլոգները կարողանում որոշել երեխայի սեռը՝ սրտի զարկերի հաշվարկով կամ որովայնում տեղադրությամբ:

Մեր օրերում էլ կիրառվում է թելի օգնությամբ գուշակելու մեթոդը, երբ թել են անցկացնում մատանու միջով և այն անշարժ պահում հղիի որովայնի վրա և թելի պտտվելու ուղղությամբ՝ կտր թե հետուստաջ որոշում էին սպասվող պտղի սեռը:

Գուշակություններ էին կատարում Նոր տարվա համար թխվող ծիսական խմորեղենով, եթե տան հարսի համար նախատեսված թխվածքը թոնրում ուռչում էր դեպի վեր, համարում էին որ գալիք տարում ընտանիքում արու զավակ է ծնվելու¹⁵: Գուշակություններ արվում էին նաև թոնիր նետվող խմորագնդի միջոցով, եթե ճայթում էր՝ տղա պետք էր սպասել, իսկ եթե մնում էր թոնրի հատակին՝ աղջիկ (Վայոց ձոր, Մալիշկա): Ըստ էության բոլոր գուշակություններում հստակ ցուցվում է նաև տղա երեխայի մշակութային նախընտրությունը և բարձր արժեքը աղջկա համեմատությամբ, երբ ժողովրդական պատկերացումներում առանցքային համարվող սխալ, վատ հատկանիշները՝ ձախ կողմը, տգեղը, վատ զգալը կապվում էին աղջկա ծնունդի հետ, իսկ դրական հատկանիշները՝ տղայի: Տարածված էին նաև այլ գուշակություններ, երբ կրծքի կաթը կաթեցնում էին ջրի մեջ, եթե տարրալուծվեց, հաջորդ երեխան աղջիկ էր ծնվելու (Գավառ), եթե կաթիլի ձևը պահպանվեց՝ տղա, կամ միջատի հատուկ տեսակի վրա հղին թքում է, եթե սատկեց տղա է (Ամասիա) և այլն:

Պահապան միջոցառումներ «պարզև» տղաների համար Անձնանվան միջոցով.

Երբ ծնվում էին առաջնեկ դուստրերը, որի հետ սկիզբ էր առնում ծնողների տագնապը, սկսում էին կիրառել տարբեր կանխարգելիչ միջոցառումներ: Ձեռնարկվող առաջին միջոցներից մեկն անվան օգնությամբ հաջորդ դուստրերի ծնունդը կանխելն էր: Դրա համար աղջիկներին, օրինակ, հաճախ կոչում էին ավարտ նշանակող բառերով՝ Բավական, Թամամ, Վերջիկ, Բոլիկ, Հերիք (նագ), Էվել (ինա), հուսալով ընդհատել ան-

¹⁵ Ա. Օղաբաշյան, Քրիստոնեական Ամանորի հետ կապված որոշ ծիսական վերապրուկներ, ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր, 1965, N3, [http://basss.asj-oa.am/2605/1/1965-3\(91\).pdf](http://basss.asj-oa.am/2605/1/1965-3(91).pdf); Հ. Խառատյան, Հայ ժողովրդական տոները, Զանգակ, Եր., 2005; Ռ. Ծատուրյան, Հայոց ավանդական տոնական ուսեստը, Գիտություն, Եր., 2011:

ցանկալի ծնունդները և, որ հաջորդ երեխան որդի ծնվեր: Մինչդեռ տղաների համար ընտրվում էին Ավագ, Առաջին, Անդրանիկ, Կարապետ անունները¹⁶, որ իբր տղաների շարքում սրանք առաջիններն են, իսկ մյուս տղաները դեռ պիտի ծնվեն¹⁷:

Սպասված տղաների անուններում հաճախ են հանդիպում քրիստոնեական սրբերի և երևույթների անուններ՝ Նարեկ, Հովհաննես, Գևորգ, Ավետիս, որոնց մասին պատմությունները տարածված են ժամանակակից կենցաղում. «*մեր գյուղացին 5 աղջիկ ունի, 5-րդի անունը դրեցին Բավական, հետո ծնվեց փղա, անունը դրեցին Նարեկ*»: (Թալին, Արագածոտն)

«Իմ հորաքույրը 2 աղջիկ թոռ ունի, 3-րդը փղա ծնվեց, զառ մայրաղ արեցին, անունը դրեցին Ավետիս» (Տավուշ, Իջևան):

«Քեռիս 3 աղջիկ ուներ, 4-րդը փղա ունեցավ, զնաց Սուրբ Հովհաննես, ինդրեց, ասեց, եթե փղա ծնվի, ձեր անունով կկոչվի, ավել էին փանում, էստեղ ավլում, որպես սուրբ ավել...» (Շիրակի մարզ, Ամասիա)

Եթե քրիստոնեական բովանդակությամբ ներշնչված անձնանունները ավելի տարածում գտան հետխորհրդային շրջանում, ապա խորհրդային շրջանում սպասված տղա երեխաներին փրկում էին թուրքի անուն դնելով. «*Իմ հորեղբոր կինը ծննդաբերում էր, բայց երեխաները չէին ապրում, մահանում էին, վերջապես մի փղա ծնվեց, որոշեցին, որ թուրքի ծախեն, կանչեցին իրանց դոսրին /բարեկամացած մարդ/, որ երեխուն գրկեց, իրա շապիկը հագրեց, անունն էլ դրեց Համիդ»* (Տավուշի մարզ, Իջևան):

Համաձայն նույն հավատալիքների, այդ ուժերը գիտակցվում էին որպես ուրիշ լեզվով խոսող, ուրիշ կենցաղ ունեցող: Ուստի ծնողները և մոտ ազգականները այդ կերպ փորձում էին խաբել օտար ուժերին, իբր երեխաներն իրենցը չեն, այլ նրանցը, ում այդ ոգիները հովանավոր են:¹⁸ Այս սովորությունը կենսունակ էր մինչև 1970-ականները, հետագայում բժշկության զարգացմամբ պայմանավորված և մանկամահացության տեսլերի կրճատմամբ, սովորույթը մարեց, իսկ Հայաստանի անկախությունից հետո՝ իսպառ վերացավ: Փոխարենը, հատկապես տղա երեխաներին պաշտպանելու նպատակով տարածվեց քրիստոնեական սրբերի անուններով անվանակոչելու սովորույթը:

Ն. Մարգարյանը հայերի մոտ անձնանունների ընտրության հիմնական մոտիվներին նվիրված իր աշխատանքում ներկայացնում է բազում

¹⁶ Թվարկած անունները Հովհաննես Մկրտչի մակդիրներն են և տրվում էին նաև այդ սրբի տոնին կնքվող երեխաներին:

¹⁷ Ն. Մարգարյան, Անձնական ընտրությունը արևելահայոց մեջ 19-րդ դարի վերջ-20-րդ դար, 2000թ., Թեկնածուական ատենախոսություն, անտիպ, ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարան

¹⁸ Ն. Մարգարյան, նշվ. աշխ.:

այլ օրինակներ, թե ինչպես են պահպանման, ուժի, հաջողության հետ կապված անունները նախատեսվում տղաների, իսկ պտղաբերության, որդեճնության սինվոլիկա ունեցող անունները՝ աղջիկների համար:¹⁹

ԽՏԱՄՔԻ ՄԻՋՈՑԱՆՈՒՄՆԵՐ

Տղա երեխաների ծնվելու ուրախությունն ուղեկցվում էր նաև նրանց բազմապատկելու, ինչպես ընդունված էր Շիրակի և Արագածոտնի մարզերում՝ ջխտելու ակնկալիքով, ինչը տարածված է անգամ ժամանակակից կենցաղում: Մինչդեռ ավելորդ է քննարկել աղջիկ երեխային բազմապատկելու հարցադրումը: Ավանդական կենցաղում առաջին անգամ երեխային լողացնելիս՝ տատմայրը/ծնունդ ընդունող կինը, եթե երեխան արու էր՝ կաթսայի մեջ մի քանի թաս ջուր էր թողնում, որպեսզի նրան հաջորդողը ևս տղա լինի, իսկ եթե աղջիկ էր՝ ամբողջ ջուրը թափում էին, որպեսզի «Ինչպես ջուրը կտրուում է, այնպես էլ աղջկայ “քոքը” (արմատը) կտրուի և այլևս աղջիկ չծնուի»²⁰: Այս սովորությունների վերապրուկներ հետազոտության արդյունքում չեն գրանցվել, սակայն սրանց ներկայացումը նպատակ ունի ցույց տալ ժամանակակից պատկերացումների ու դրանով պայմանավորված համատեքստի արմատներն ու պատմությունը:

ՄՈՂՈՐԵՑՆԵԼՈՎ չԱՐ ՈՂԻՆԵՐԻՆ

Սպասված տղա երեխայի ծնունդին հաջորդող պաշտպանական միջոցառումներից էին տարբեր խոստումներն ու զոհաբերությունները:

Մտրբ վայրեր ուխտագնացությունների «արդյունքում» ծնված տղա երեխաների մազերը հաճախ ծնողները «խոստանում, ուխտում էին» 7 տարի չկտրել: Առաջին անգամ մազ կտրելը ևս իրականացնում էին սրբի մատուռի մոտ զոհաբերությունից հետո: Այս ծեսի նպատակը ի վերջո հանգում էր երեխային պաշտպանելուն, չար, վնասատու ուժերի համար անճանաչելի դարձնելուն: Այսօրինակ ծեսերի մասին պատմությունները ներկայացվում էին Տավուշի և Շիրակի մարզերում՝ նշելով սակայն, որ վերջին նման դեպքերը գրանցվել են մոտ 7-8 տարի առաջ:

Հետաքրքրական է, որ հայոց մշակույթում երեխայի պաշտպանելուն ուղղված այլ ծեսեր էին մշակված. հատկապես այն ընտանիքներում, որտեղ մանկական մահացությունը բարձր էր, ծնված երեխաներից քչերն էին ապրում, հիմնական ջանքերն ուղղվում էին ծնված տղա երեխաներին չար ուժերից, հիվանդություններից պաշտպանելուն. անճանաչելի դարձնելու նպատակով մազերը չէին կտրում (աղջիկ երեխաներին չար ուժերից պաշտպանելու մասին ավանդույթների մասին տվյալներ չեն ներկայաց-

¹⁹ Մանրամասն տես Ն. Մարգարյան, նշվ. աշխ.:

²⁰ Լալայան Ե., ԱՀ, Նոր-Քայազետի գաւառ, 1907, գիրք 16, էջ 37:

վել): Վերոհիշյալ միջոցառումները բխում են այն պատկերացումներից, որ երեխաները վաղաժամ մահանում կամ հիվանդանում են աներևույթ թշնամի ուժերի, չար ոգիների, հոգեհո հրեշտակների պատճառով:

Այս սովորությունը կենսունակ էր մինչև 1970-ականները, հետագայում բժշկության զարգացմամբ և մանկամահացության տեմպերի կրճատմամբ պայմանավորված, սովորույթը մարեց, իսկ Հայաստանի անկախությունից հետո՝ իսպառ վերացավ: Փոխարենը, հատկապես տղա երեխաներին պաշտպանելու նպատակով տարածվեց քրիստոնեական սրբերի անուններով անվանակոչելու սովորույթը: Գառ զոհաբերելու՝ մատաղ անելու սովորույթը դեռևս որոշակիորեն կենսունակ է Հայաստանում, երբ սրբավայրեր այցելությունների ժամանակ «խոստանում են» խնդրանքն իրականանալու համար կամ դրանից հետո մատաղ անել:



ԿԱՆԳԱՌ 3

Ծրագրավորել և պատվիրել տղա

*Կերթան սուրբ Հովհաննես, գրքացների մուր, թելով
հաշվարկ էտողներ կան, ընպես արսուրդ բաներ
կենեն՝ կակար՝ ընկույզը դնեն բանկի մեջ, տանեն
թաղեն սարի քյալեն...*

(Գյումրի, գինեկոլոգ)

Այն մեթոդները որոնք հիմնված են մինչև հղիանալը սեռի ընտրության սկզբունքի վրա, դրանց համար պահանջվում է սերմնահեղուկի տեսակավորում, նախաբեղմնավորման փուլում գենետիկական կանխորոշում կամ արհեստական բեղմնավորում իրականացնելու համար անհրաժեշտ բարդ սարքավորումների հասանելիություն: Այնուամենայնիվ, արժեքի և մատչելիության հետ կապված գործոնները սահմանափակում են այս տեխնոլոգիաների կիրառումը Հայաստանում²¹: Սակայն հատկապես առցանց հարթակներում շրջանառվում է տեղեկատվություն այն մասին, որ «գենետիկական անալիզի» միջոցով հնարավոր է «պատվիրել» տղա երեխա: Այս քննարկումներն էլ չեն ակտիվանում, քանի որ ինֆորմացիան քիչ է, արժեքը թանկ, ճանապարհը՝ բարդ:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ միջին տարիքային խմբի կանայք և տղամարդիկ ավելի տեղեկացված են ավանդական համարվող մեթոդներից, որոշակիորեն կիսում են դրանց հավաստիությունը: Երիտասարդ կանայք և տղամարդիկ լսել են այդպիսի մեթոդների մասին, թեպետ արդեն չեն կիրառում՝ նախընտրելով «սեփական ավանդույթների» ստեղծումը, կոմերցիոն առաջարկների սպառումը:

Ըստանիքում աղջիկ երեխաների առկայության դեպքում ժամանակակից իրողություններում հիմնականում չեն համարձակվում պլանավորել հաջորդ երեխան՝ առանց հաշվարկների դիմելու:

«Հաշվարկի» մեթոդները նշվում են որպես հիմնական որոշիչ մեթոդ՝

²¹ Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում ժողովրդագրական տվյալներ եվ վերլուծություն, http://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report_arm.pdf, էջ 16:

տղա երեխա պլանավորելու գործում: Ընդ որում, հաշվարկի մասնագետները հիերարխիկ աստիճանակարգում են. բարեկամ, ծանոթ, հարևան ուղղակի հաշվողներից մինչև այդ գործում հմտացած և ճանաչված մասնագետներ և ծառայություններ: Տղա ունենալու կոնկրետ երազանքով մտահոգվածները անցնում են հաշվարկների բազմաստիճան ճանապարհով՝ փորձում և համադրում են մի քանի ինֆորմացիաներ՝ ինտերնետից, ծանոթներից և որոշում ընդունելու դեպքում դիմում են առավել փորձված «մասնագետների» օգնությանը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ հատկապես մարզերում բուժանձնակազմը՝ բուժակները, մանկաբարձները և անգամ որոշ դեպքերում թերապևտները իրենք են ներգրավված այս հաշվարկներում՝ իրականացնում են դրանք ինչպես կամավոր այնպես էլ գումարի կամ նվերի դիմաց:

«Իմ հարսին տարա կոնսուլտացիա, բժշկուհին մտերիմ էր, ասաց մի հար չհաշվենք, նոր հաշվառենք, դե ինքը արդեն 3 ամսում էր, առաջինը աղջիկ էր, տենանք ինչ կունենաս, ինքը տարբեր բաներ հարցրեց, իրանք մասնագիտորեն են հաշվում, ասաց, որ տղա պիտի լինի, տղա ունեցավ, չնայած հետո էիսն էլ ասեց, որ տղա ա» (կին, Ապարան, գյուղ)

Առցանց հարթակում ևս արդեն գործում են երեխայի սեռի հաշվարկի ծառայություններ: Ֆեյսբուքյան «Սեռի հաշվարկ» էջը առաջարկում է իր ծառայությունները երջանիկ ընտանիք ունենալու հարցում, տարբեր խմբերում և ֆորումներում հարցերին ի պատասխան հայտնվում են առաջարկներ՝ վստահելի և արդյունավետ հաշվարկելու երեխայի սեռը՝ համադրելով գույգերի տարիքը, բեղմավորման տարին, ամիսը, վերջին դաշտանի օրը և այլ ըստ անհրաժեշտության ինֆորմացիա: Շիրակի մարզում, հատկապես Գյումրի քաղաքում ևս հայտնի են այն մասնագետները, որոնք հաշվարկների հավաստիության ցուցանիշը բարձր է համարվում մարդկանց պատկերացումներում:

Մարզային հեղինակություններից զատ կան համահանրապետական «ճանաչում» ունեցող հաշվողներ²², ում մոտ նախապես գրանցվում են և ամիսներ շարունակ հաշվառվում՝ մինչև հղիանալը: Ընդ որում հղիանալուց հետո հաշվարկ իրականացնողը, եթե անգամ այն իրականացրել է գումարի դիմաց, այլևս պատասխանատվություն չի կրում հաշվարկի արդյունքի համար:

²² Սեռի հաշվարկ իրականացնողների անունները չեն նշվում, նրանց առավել չհանրայնացնելու նպատակով: Թեպետ, կարծում ենք, որ լրացուցիչ կարիք կա թիրախավորել խնդիրը՝ գտնելով և ցույց տալով դեպքեր, երբ հաշվարկները ցանկալի արդյունք չեն ապահովել:

Նկարներում պատկերված կամ դրանց նմանությամբ իրականացնող գիտականության և բժշկության մոտեցումներին բացառապես հակասող ու անհիմն այս թղթիկներն էլ հանդիսանում են տղա երեխայի պատվիրաթերթեր՝ հետագայում պատճառ հանդիսանալով նոր հիասթափությունների, զրկանքների ու ապրումների,- *«Կեսուրս հաշվում է, ասում է, որ սովորել է դեռ ուսանող ժամանակ, ինչ որ մի գեղարվեստական գրքից»*,-պատմում է գյումրեցի կինը:

Ընդ որում, հաշվարկները հաճախ այս պարզ թերթիկներով չեն սահմանափակվում, եթե կարիք կա որոշելու կոնկրետ արգասաբեր կամ «տղայաբեր» բեղմնավորման օրը, կինը մի քանի ամիս, 3-ից սկսած պետք է գտնվի հաշվարկողի «ճիրաններում»։ դաշտանի օրերով կանխորոշելով հղիացման նպաստավոր օրերը՝ հաշվարկողները 3-9 ամիս շարունակում են իրենց աշխատանքը, որի արժեքը սկզբնական մոտ 20.000 դրամից ամսական տատանվում է 3-5000 դրամ: Այս մեթոդների կիրառման արդյունքում սահմանվում են նաև այն ժամանակագրական շեմերը, որի շրջանակներում հանարավոր է տղա անկնկալել. Դե ինձ հաշվեց, ասեց կամ մինչև էս տարվա վերջ, կամ էլ 2019-ից շուտ չի լինի. *«Հորեղբորս աղջիկը հաշվում աս, ասում աս որ օրը հղիանաս, որ տղա լինի, իրա հաշվելով հարսս ու տեգորս հարսը հղիացան ու տղա ունեցան: Իսկ մյուս տեգորս աղջիկը երկու աղջիկ ուներ, հղիացավ, զանգեցինք էդ հաշվողին, նա նայեց, ասեց աղջիկ աս, դե իրանք էլ զնացին հանեցին, ու համ էլ ասեց, որ մեկ էլ իրանք տղա կունենան 2019 թվին, դե դա սեգոնային աս...հետո էլի մի անգամ իրա ասելով ընդհատեց...»* (կին, Ապարան)

Այս սահմանափակումները և տղա ունենալու անհագ ձգտումը պայմանավորում են նոր վերարտադրողական պրակտիկաների ձև. *«Ես գիտեմ դեպքեր, երբ կոնկրետ Գավառում հաշվողն ասել էր, թե կոնկրետ որ օրը հղիանար, ամուսինն էլ Ռուսաստան էր, տունն առավ, թոավ իրա մոր, հիմա տղա ունեն»* (կին, Գավառ):

Հաշվարկների այս մեթոդներին և ցանցին կարելի էր հատուկ ուշադրություն չդարձնել, եթե դրանք որոշիչ չհամարվեին երեխային ծնվելու հնարավորություն տալու հարցում: Հաշվարկներով հղիանալուց հետո տղա երեխայի սպասող հղիները չեն շտապում հաշվառվել որպես հղի: Լուռ սպասում են 10-12 շաբաթ, որպեսզի հնարավորություն ունենան ճշգրտել արդյունքը, ապա նոր հանրայնացնել հղիության փաստը: Պատմությունները այս հաշվարկների «սխալների» մասին, որոնք ի վերջո ավելացնում են չծնված աղջիկների քանակը Հայաստանում՝ շրջանառվում էին հետազոտության ողջ ընթացքում՝ առանց մարզային առանձնահատկությունների:

«Մոնոյի բժիշկը ասել էր Կրիստին, հետո աղջիկ ծնվեց, ընդունվել էր հետնահոսք, ուզում էին թե խեղդեն» (Տավուշ, Իջևան)

Կամ

«Ընկերուհիս պաշտոնյայի կինն էր, մի աղջիկ ունի, էս հղիությունը... Հաշվարկեց, ասեց Կրիստին, բայց պարզվեց աղջիկ էր, դե ինչ, ստիպված պիտի բերի, բայց իրանք ուժեղ սթրես են տանում» (Կին, Գյումրի)



ԿԱՆԳԱՌ 4

Պատվերի ճշգրտում. Տեսնել և համոզվել, որ տղա է

Գնում ես ...յանի մայրը հաշվարկում աս, հետո գնում ես ...յանի մոր նայել տալիս, համոզվում որ տղա աս, նոր միայն ...յանի մոր հաշվատվում՝ որպես լավ գինեկոյուզ:

Գյումրի, կին

«Էդ ապարատ քանդեց ընտանիք»

(Արագածոտն, Ներքին Բազմաբերդ, տղամարդ)

Տարբեր գուշակությունների, կանխորոշման պրակտիկաների, հաշվարկների արդյունքում արձանագրված հղիության ընթացքի հաջորդ փուլը տղա պտուղի գոյության փաստի ստուգումն է ուլտրաձայնային հետազոտության մեթոդի (ՈՒՁՀՄ) միջոցով: Հետազոտության մեջ ներառված մարզերում բոլորը տեղյակ էին նայել տալու, սոնոգրաֆ, սոնո անելու, էխո անելու (Շիրակ, Արագածոտն), ապարատ ընգնելու (Գեղարքունիք) մեթոդի մասին՝ որպես պտղի սեռը որոշելու միակ արժանահավատ և անսխալական մեխանիզմի:

ՈՒՁՀՄ ներառվեցին հղիության հետազոտությունների շարքում 1990-ականներից և ներկայումս համատարած կիրառվում և ընկալվում են որպես պտղի սեռը որոշող մեթոդ: Հետազոտության ավելի տարիքով մասնակիցները հիշում էին այս հնարավորության ավելի վաղ տարածումը ԽՍՀՄ կենտրոնում՝ Մոսկվայում. «Ես արդեն երկու աղջիկ ունեի, երրորդով հղի էի, ամուսնուս ասեցի արի գնանք Մոսկվա սրուզվելու, 1986 թիվն էր, բայց ինքը չթողեց, ասեց, մեկ աս, 100 աղջիկ էլ ունենաս, վերջը տղա քերելու ես» (Տավուշի մարզ, Իջևան, գյուղ):

Ընդ որում, հետազոտության մասնակիցների կարծիքով ևս այն հանդիսանում է շրջադարձային կետ՝ քննարկվող խնդրի համատեքստում. «Նախկինում բազմազավակությունը ընդունված էր, միջինը 6-7 երեխա էին ունենում, ոնց լինի մեջները մի երկու տղա լինում էին բնական ձևով, իսկ հիմա քանի որ մարդիկ ուզում են երկուսից ավել երեխա չունենալ,

*լարվածությունը մեծանում է և ուզում են իրենց սպահովագրել էդ էխս-
յով»* (տղամարդ, Ապարան):

Միջին տարիքի կանայք, ուլքեր գիտեին և պատմում էին պտղի սեռի ավանդական գուշակությունների մասին, նշում էին, որ այս գործողությունները արդյունքում իրավիճակ չէին փոփոխում, այսինքն հղիությունը շարունակվում էր և միայն ծնվելուց հետո էր պարզ դառնում երեխայի սեռը:

Ինտրի մասին խոսելիս թվում է, թե ինչ հետազոտելու կարիք կա, երբ հղին ուղղակի գնում է ուլտրաձայնային հետազոտության և իմանում է պտղի սեռը: Հետազոտության ազգագրական մեթոդների կիրառումը հնարավորություն տվեց բացահայտել այս թվացյալ ակնհայտ կանգառը՝ տղա ունենալու «ճանապարհային քարտեզում»: Բժշկության մեջ սահմանված է , որ պտղի սեռը կարելի է բացահայտել հղիության 12-14 շաբաթներից սկսած:²³

Հետազոտության այս մասում պտղի սեռի որոշման ուլտրաձայնային մեթոդի կիրառման պրակտիկաներին անդրադարձը պայմանավորված է միայն այն հանգամանքով, որ դրա անցանկալի արդյունքները որոշիչ են լինում հղիության ընդհանրման համար:

Այս պրակտիկաները իհարկե կիրառվում են այն կանանց կողմից, ուլքեր «պատվիրել» և սպասում են կոնկրետ տղա երեխայի: Թեպետ, երեխայի սեռի մասին հարցումները ըստ գինեկոլոգների համատարած են նաև առաջին այցելության և հաշվառման ժամանակ. «*Երեկ մի հղի եկավ մորս, առաջին երեխան էր ու միանգամից հարցնում է, բժիշկ ջան, սեռը կրճես: Ասում եմ ինչի՞դ է պեղք, ասում ա դե շոր բան առնելու համար: Ու այդ նույն կինը երբ իմացավ, որ աղջիկ է ունենալու, միանգամից տխրեց*» (Գյումրի, գինեկոլոգ)

Եվ այսպես հղիության թեպօր կամ դաշտանային ցիկլի ուշացումը հուշում են հնարավոր հղիության մասին այն կնոջը, ով անհամբեր սպասում է տղա երեխայի: Փաստին հաջորդում են լուռ և լարված սպասման ամիսներ. «*Մեկ տղա ունենք, եկել ենք սեռը իմանանք, մեր պարսն Ռուսաստան կրսպասե, ինքը տղա գուզե, դե ախպորը ախպեր է պեղք, դե ես էլ աղջիկ, բայց որ պապան կուզե...*» (Գյումրի):»

Տղայով հղի լինելու փաստը պարզելու նպատակով կանայք հղիության վաղ ժամկետներում այցելում են ՌԻՁՀ կամ իրենց մարզային կամ միանգամից երևանյան հայտնի մասնագետների: Ընդ որում, անգամ մարզային մասնագետների կողմից հետազոտության արդյունքները մեկ կամ մի քանի անգամ ևս ճշգրտում են արդեն Երևանում: Եթե ՌԻՁՀ որպես հղիության թեպօ ենթադրում է անվճար իրականացում, ապա պտղի սեռի բացահայտման համար մարդիկ պատրաստ են վճարել լրացուցիչ

²³ Fetal gender assignment by first-trimester ultrasound Z. EFRAT, T. PERRI, E. RAMATI, D. TUGENDREICH and I. MEIZNER, Ultrasound Obstet Gynecol 2006; 27: 619–621

գումար, որը հմուտ մասնագետների դեպքում կկազմի 5-10.000 դրամ: Հետազոտության մասնակիցների պատկերացումներում պտղի սեռի հայտնելը պարտադիր ենթադրում է առանձին գումարի վճարում, որը առանձին է հղիության կոնսուլտացիաների գումարից: Հետազոտության ընթացքում շրջանառվում էին նաև պատմություններ, երբ ՌԻՉՀ մասնագետը՝ զգալով, որ աղջիկ պտուղի լուրի մասին հայտնելը կարող է ճակատագրական լինել, ասել է, թե դեռևս չի երևում պտղի անհարմար դիրքի պատճառով և առաջարկել է երկու շաբաթ անց մոտենալ՝ հուսալով, որ արդեն մեծ պտուղի դեպքում հղիության ընդհատման որոշումն ավելի դժվարությամբ կիրականացնեն. *«Ես աղջիկ չէի ուզում, 14 շաբաթական էր հղիությունս, գնացի էխոյի, ասեց սեռը չի երևում, դե հիմա հասկանում եմ, որ խաբեց: Աղջիկս ծնվեց: Ու հիմա փարիսների հետվից կարող եմ վարսահ ասել, որ իմ ողջ կյանքում ամենախելացի քայլը որ արել եմ, դա իմ աղջկա ծնունդն է»* (Տավուշի մարզ, ընտանեկան բժիշկ):

Իհարկե, այս պատմություններում երբեմն լինում են երջանիկ ավարտներ, սակայն առավել նպատակալացները, որոնք փափագում են տղա երեխա ունենալ՝ ի վերջո համառ ու հետևողական ջանքեր ու ռեսուրսներ ներդնելով, գտնում են այն մասնագետին, ով իրենց համար բացահայտում է երեխայի սեռը *«Ապարադի բժշկուհին հաշվեց, ասեց փղսա լինելու, հետո երկու անգամ ապարադ ընգավ, ասեցին աղջիկ ա, հենացրեց»* (Գեղարքունիք, Գավառ):

Ընդ որում պտղի սեռի ՌԻՉՀ հայտնի մասնագետների մոտ հայտնվելն էլ պահանջում է լրացուցիչ ժամանակ. նախնական գրանցում, կոնկրետ սահմանված վճարի մուծում, հերթեր, սպասումներ:

«Չեք պարկերացնե, թե ինչ սահալոր վիճակ է էդ էխոյի մոտ: Գյումրիում մի հայրնի մասնագետր կա, մի անգամ գնացել էի հետազոտության ու փեսա միջանցքներում նրա մոտ պաստող կանանց: Էսբասն լարված էին...Իրենց հերթը հասնելուց ու ներս մտնելուց առաջ խաչակնքվում էին, հետո եթե ասենք մեկը դուրս էր գալիս ու իրենց ասած էին լինում փղսա, սպասողները անհամբեր հարցնում էին հը, ինչ ըսավ, նա էլ ուրախ ասում էր փղսասա ու ձեռքը դնում էր մյուս սպասողների գլխին՝ որպես փարոսի նշան» (Գյումրի, կին)

Ընդ որում, հատկապես մարզերում տարածված պրակտիկաներում ամուսնական զույգերը միասին չեն այցելում ՌԻՉՀ, այլ հղի կնոջը որպես կանոն ուղեկցում է սկեսուրը, ամուսնու քույրը, իր մայրը, ընկերուհին և այլ կին հարազատներ: Հետազոտության շրջանակներում անձամբ ներկա եմ գտնվել նման բարեկամական գինեկոլոզիական այցելությունների և հստակ է, որ այս ֆորմատը չի ստեղծում որևէ հնարավորություն բժշկի և ապագա երեխայի ծնողների համար համատեղ քննարկելու և իրավի-

ճակը «յուրացնելու»։ «Ինձանից մեծ մի քույր ունեմ, մամասսա իմացել և որ հղի և, 1993 թիվն և եղել, գնացել և սպարապրի բժշկուհին նայել և, ասել և աղջիկ և, որոշել և, որ պետք չի: Պասասս ևկել և Կուն, Կունել և , որ մամասս Կանը չի, Կարիկս ասել և, որ իրս մոր հետ գնացին հանելու... Պասասս վազելով մի կերպ հասել և հիվանդանոց ու ես էղպես մի կերպ փրկվել եմ, ու ես կարող և ծնված չիինեի, բայց ինչի՞, ի՞նչ էի արել մամասս-իս, ես մինչև հիմա էլ, հենց հիշում եմ, մամասսիս ներել չեմ կարողանում...» (Գեղարքունիք, Գավառ)

Բժիշկներն էլ նշում են, որ եզակի դեպքերում, երբ հստակ զգացել են, որ աղջիկ պտուղը վտանգի տակ է, հատուկ կանչել և զրուցել են հղիի զուգընկերոջ հետ և բացատրական աշխատանքների արդյունքում հղիությունը շարունակվել է:

«Հղիներից մեկին անցյալ տարի էխոյի ժամանակ ասել էինք աղջիկ (ստացին երեխան էր), հաջորդ օրը առավոտը շուր աղջկա մայրը եկել էր բժշկի դռան մոտ ու ասում էր՝ մի բարի սուր ասեք, երեխոս Կունը արունք է ընկել, ամուսինը չի ուզում, հետո հետ-ները զրուցեցինք, դե ծնվեց էդ աղջիկը...» (Գյումրի, գինեկոլոգ)

ՈՒԶՀ հմուտ մասնագետները Հայաստանում ճանաչված են և նրանց քանակը չի անցնում մեկ տասնյակը: Այս շարքում կան առավել «առասպելական» կերպարներ, ովքեր պտղի սեռը հղիներին հայտնում են ՈՒԶՀՄ կիրառման հենց սկզբից և անգամ այլ մասնագետների մոտ այցելություններից հետո ավելի լարված հղիները անպայման ձգտում են վերջին համոզիչ տվյալները ստանալ նրանցից. «*էդ ... սասունցիների սարվածն և, վերջին խոսքը նրանն և, ում մոտ էլ գնան, վերջը նա և ճիշտ ասում»* (Արագածոտն, Ն. Բազմաբերդ, տղամարդ):

Բժիշկներն ու գինեկոլոգները պատմում են տարբեր դեպքեր, երբ իմանալով, որ աղջիկ են սպասում, հղին ու իր բարեկամները անբարյացկամ վերաբերմունք են ցուցաբերում իրենց հանդեպ. «*Առօրյայում ճանաչում էի այդ մարդկանց, ինտրիլիգենտ, նորմալ մարդիկ էին, մի օր կինը քրոջ հետ եկավ, սեռը իմացավ որ աղջիկ է, դուռը վրաս էսպես ուժեղ շրիկացնելով հեռացավ: Հերևից դուս եկա, հարցրեցի ես ինչ կաս ունեմ կամ ինչով եմ մեղավոր, քույն ասում է, դե սիրտը շար և նեղված, էլ չդիմացավ...»*

Իհարկե, տղա երեխայի սպասման մասին լուրն էլ անչափ առատաձեռն է դարձնում ծնողներին և հարազատներին. «*Ամուսինս օդերով էր թռնում, երբ բժշկուհին ասեց, որ տղա և, համ իրան գումար Կունեց, համ էլ ասեց, որ տղես ծնվի, ես ձեզ նորից կայցելեմ: Տղաս որ ծնվեց, նորից կոնյակ ու կոնֆետ տարալ: Բժշկուհին շար էր զարմացել, ասել էր չէի սպասում, որ հետո էլ կհիշեք ինձ»:* (Կին, Գյումրի)



ԿԱՆԳԱՌ ՎԵՐՋԻՆ

Ցանկությունների սրբագրում. մեզ տղա է պետք և վերջ

Ինչպես վարվել, թողնել որ աղջիկը ապրի, թե՛ ոչ: Այս հարցադրումների և դրանց լուծման առջև են կանգնում այն ծնողները, ովքեր փափագում են տղա ունենալ և պարզում են, որ աղջիկ են սպասում:

Ստեղծ պայմանավորված հղիության ընդհատումներ

Համարվում է, որ տղա երեխայի նախընտրության կոնկրետ իրավիճակի մասին պետք է խոսել այն դեպքերում, երբ մեկ աղջիկ ունեցող կինը ավելի շատ արորտ է իրականացրել, քան մեկ տղա ունեցող կինը: Հաստատանը այս ցուցանիշներով համարվում է արու գավակի նախընտրության երկիր, քանի որ տղա երեխայի մշակութային նախընտրությունները վերածվում են նաև կոնկրետ գործողությունների՝ անցանկալի աղջիկ պտուղներից ազատվելու նպատակով:

Իհարկե, տղա երեխայի սպասումով ոչ բոլոր աղջիկ երեխայով հղիություններն են ընդհատվում: Մակայն հետազոտության արդյունքները համադրվելով այլ հետազոտությունների արդյունքների հետ, հուշում են, որ խնդիրն առկա է: Հետազոտության ընթացքում պտղի իգական սեռը պարզելուն հաջորդած հղիության ընդհատման մասին պատմությունները ակտիվ շրջաատվում էին.

«Հղի ունեինք, 2 աղջիկ ուներ, երրորդին էր սպասում, մի օր եկավ ասեց, թե ինձ հաշվառումից հանեք, էլ հղի չեմ, ընդհատել եմ, էլի աղջիկ էր, ամուսինս կորսականապես ասեց մեզ պեղք չի, կհանես, նոր կգաս մոյրս՝ Ռուսաստան» (Գյումրի, մանկաբարձ)

կամ

«Ախալքալակից մի կին կար, 3 փարի մոյրս բուժվում էր

անպորոշությունից, հեղու վերջապես հղիացավ, իմացան աղջիկ էր, ընդհապեցին...» (Գյումրի, գինեկոլոգ):

«Մի կին կար, ահագին մեծ հղիություն էր, ընդհապեց Երևանում, քանի որ ամուսինը ասեց կրածանվեմ» (Ապարան, գինեկոլոգ):

Ընդառաջ գնալով հանրային մտահոգություններին 2016թ. նախաձեռնվեց և իրականացվեց օրենսդրական փոփոխություն, որով սահմանվեց, որ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները 12-ից մինչև 22 շաբաթական ընթացքում արգելվում են²⁴: Մինչդեռ, «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման (աբորտի) իրավունք մինչև 12 շաբաթական ժամկետը:²⁵ Այս սահմանով է պայմանավորված պտղի սեռի որոշման ժամկետը՝ աբորտի թույլատրելի ժամկետներում տեղավորվելու կամ դրան մոտ լինելու, ինչպես նաև փոքր ժամկետներում հղիության ընդհատման հետ կապված էմոցիոնալ, ֆինանսական և առողջական ռիսկերը նվազեցնելու նկատառումներով:

Հայաստանում հղիության արհեստական ընդհատումների ցուցանիշների մասին արվել են հետազոտություններ²⁶: Այս հետազոտության խնդիրներից չէ աբորտների քննարկումը: Հարցին անդրադարձ է կատարվում, որպես արու զավակ ունենալու «ճանապարհային քարտեզի» վերջին կանգառի:

Հետազոտության իրականացման տարածքներում հղիության արհեստական ընդհատումն անվանում են «հանել, հեռացնել» արտահայ-

²⁴ Թեպետ հետազոտության ընթացքում բուժ անձնակազմի կողմից հետադարձ տեղեկատվություն չի գրանցվել՝ օրենդրական այս փոփոխության մասին:

²⁵ ՀՀ օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», հոդված 10, կետ 2: <http://www.arlis.am/>

²⁶ Առողջություն և առողջապահություն. վիճակագրական տարեգիրք, Երևան, 2016, էջ 130-132 http://old.moh.am/uploadfiles/Health_Health%20Care%20Year%20Book_2015_Arm.pdf; Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն. Հիմնական ցուցանիշների զեկույց 2015-2016 <http://dhsprogram.com/pubs/pdf/PR79/PR79.ARM.pdf>; Listening to women's voices: perceptions & experiences with contraception & abortion in rural Armenia by Ani Jizloyan <http://pqdtopen.proquest.com/doc/1499237987.html?FMT=AI>; Knowledge, attitudes, and practice of abortion among women and doctors in Armenia Erica Chong, Tamar Tsereteli, Susanna Vardanyan, Gayane Avagyan and Beverly Winikoff, Gynuity Health Projects, New York, USA, Gynuity Health Projects, Tbilisi, Georgia, Women's Rights Centre, Armenia, and State Medical University, Armenia, The European Journal of Contraception and Reproductive Health Care, October 2009;14(5):340-348, <http://www.tandfonline.com/sci-hub/cc/doi/full/10.3109/13625180903131348>

տություններով: Հետազոտության մասնակիցների և բուժանձնակազմի հետ հարցազրույցները թույլ են տալիս արձանագրել, որ հասարակական պատկերացումներում սեռի հիմքով հղիության ընդհատումների հարցում խիստ հասարակական բարոյական սահմանափակումներ չեն կիրառվում. «*Ռե սնտարբեր ստում են, դե հա, ըղիկ ինչ է որ, ընդամենը երկու ամբողջական էր*» (մանկաբարձ, Գյումրի):

Կանայք և տղամարդիկ առանց հատուկ էմոցիոնալ լարվածության քննարկում են սեռի հիմքով հղիության ընդհատումների երևույթը՝ համարելով այն ընտանիքի պլանավորման և ցանկալի սեռի երեխա ունենալու իրավունքի իրացում. «*դե մարդիկ տղա են ուզում ունենալ, բա ինչ էնեն, քերեն, չկրնանան պահեն, մանկատուն տան*» (Ամասիա, Շիրակի մարզ):

Հետազոտության հարցադրումները ցույց տվեցին, որ չի գործում հասարակական պարսավանքի/մեղադրանքի դրսևորում՝ սեռի հիմքով հղիությունը ընդհատած կնոջ կամ նրա ընտանիքի հանդեպ:

Սեռով պայմանավորված հղիության ընդհատման երկու մեխանիզմ է կիրառվում՝ սեփական ուժերով և բժշկական արքոր: Ինքնուրույն անցանկալի հղիությունների ընդհատման դեպքում կանայք ինֆորմացիան ստանում են շրջապատից, ընկերուհիներից, տարիքով ավագ կանանցից: Հետազոտության ընդգրկման մարզերից միայն Գեղարքունիքի և Շիրակի մարզում էին դեռևս կենսունակ հղիության ընդհատման ավանդական կամ ավելի «հեղինակային» մեթոդներ, մյուս մարզերում թեպետ մասնակիցները տեղյակ էին ավանդական կամ տեղական մեթոդներին, սակայն ինչպես իրենք, այնպես էլ բուժանձնակազմը նշում էր, որ այսօր արդեն կանայք վախենում են ռիսկի դիմել և թե՛ գործը հասնում է արքորի, այն ձգտում են իրականացնել բժշկի հսկողությամբ. «*Առաջ ինչ ըսես չեն էրել, էլ սասիրին դնել, էլ եսիմ ինչ, բայց հըմի վահենում են*» (Թալին, գյուղ, մանկաբարձ, 40 տարվա ստաժ): Բուժանձնակազմը հատուկ նշում և կարևորում է տարբեր միջազգային և տեղական ծրագրերի ազդեցությունը խնդրի մասին իրազեկվածության բարձրացման գործում. «*Հիմա երիտասարդ կանայք ավելի կիրթ են, բանիմաց, հին մեթոդներից վահենում են, չեն օգտագործում: Էս դասընթացներն են շատ օգնում են, մենք բուկլերներ ենք քաժանում սպազա մայրիկներին, ֆիլմեր նայում,,,*» (Արագածոտն, Ն. Բագմաբերդ, ընտանեկան բժիշկ)

Այնուամենայնիվ, հետազոտության ընթացքում մասնակիցները պատմում էին իրենց միջավայրում կիրառվող վիժում առաջացնող տնային մեթոդների մասին, որոնք կիրառում էին բժշկի չդիմելու, գումար չձախսելու, հղիության փաստը թաքցնելու և հղիությունից աննկատ ազատվելու պատճառներով: Բնարկե, ոչ բոլոր դեպքերում էին այս տարբերակները կիրառվում կոնկրետ սեռով պայմանավորված հղիությունների ընհատման համար, սակայն նպատակահարմար գտանք այս ինֆորմացիան ներառել հետազոտության այս մասում՝ գրանցված նյութը պահ-

պանելու և փոխանցելու, ինչպես նաև հետաքրքրված մարդկանց լրացուցիչ ինֆորմացիա տրամադրելու ակնկալիքով: Միաժամանակ, եթադրում ենք, որ սեռով պայմանավորված հղիության ընդհատման արգելքների ներդրման պարագայում այսօրինակ մեթոդների մասին իրազեկվածությունը հնարավորություն կտա կանխել դրանց կիրառումն ու տարածումը:

Սրբագրում 1. Վիժեցնող մեթոդներ

Եվ այսպես, հետազոտության մասնակիցների շրջանում հայտնի վիժեցնող մեթոդներն են տարբեր թուրմերի պատրաստումը՝ կոնյակով, պղպեղով կամ կոնյակով ասպիրինով, 10 հատ կճեպով եփած ձու ուտելը, ինչպես նաև ֆիզիկական ծանրաբեռնվածության արդյունքում վիժումը՝ բարձր տեղից ցատկելը, ծանր իր բարձրացնելը, փոքր տրորելը, հեշտոցում տարբեր իրեր, դեղեր կամ մթերք տեղադրելը, որոնք պատկերավոր ամփոփված են գյումրեցի գինեկոլոգի նկարագրության մեջ. «*պացիենյուս պայմում է, թե բժիշկ ջան, 2 հասր գարեջուր խմեցի, ասպիրին խմեցի, հեյրո մերս ըսավ րսարդ ձու կղներ ներսը, հեյրո ձուն կճպեցի, դրեցի, հեյրո րսաք վաննա նսրա, քիչըմ արյուն եկավ.....Իսկ հեյրո այդ կնոջ արգանդը հեռացրեցինք*»: (Գյումրի, գինեկոլոգ)

Որպես տարածված դեղամիջոց այստուտեկի կիրառումը ևս նշվում էր որպես փորձված մեթոդ²⁷, թեպետ մասնակիցներն արդեն տեղյակ էին, որ այն դեղատոմսով է դարձել²⁸ և ձեռք բերումն արդեն դժվար է:

Սրբագրում 2. Բժշկական արքրս

Սեռով պայմանավորված հղիության ընդհատումների հետ կապված հարցադրումները հետազոտության ամենաքողարկված մասն էին: Մասնակիցները գիտեին, որ Հայաստանում արգելվում է սեռով պայմանավորված արքրտները: Մակայն, տեղյակ էին և ծանոթ էին մարդկանց/պրակտիկաների, երբ արքրտ էր իրականացվել անցանկալի սեռի պտուղը հեռացնելու համար: Այս իմաստով դժվարանում էին/խուսափում էին ներկայացնել մանրամասներ տղա ունենալու «ճանապարհային քարտեզի» այս անդամնալի, անվերադարձ կանգառի մասին: «*Նայեցին րեսան աղջիկ էր, գնացին հանեցին*» արտահայտությունով սովորաբար ավարտվում են պատմությունները:

Հետագա հարցադրումները ցույց տվեցին, որ հետազոտության ընդգրկման մարզերում կանայք միայնակ են առերեսվում արքրտին, քա-

²⁷ Մանրամասները տես՝ Listening to women's voices: perceptions & experiences with contraception & abortion in rural Armenia by Ani Jizloyan <http://pqdopen.proquest.com/doc/1499237987.html?FMT=AI> kam <http://www.eurasianet.org/node/69836>

²⁸ <http://moh.nkr.am/?p=6904>

նի որ սովորաբար ամուսինները նրանց չեն ուղեկցում, այլ, ինչպես գինեկոլոգիական խորհրդատվությունների ժամանակ, նրանք ուղեկցվում են կին ազգականների կամ ընկերուհիների կողմից. «*դե ամուսինը իմնի / ինչպես/ չիմանա, փող ա տալիս, բայց չի գալիս*» (կին, Գավառ): Ֆինանսավորում, երբեմն նաև տրանսպորտային տեղավոխում և տղամարդը որպես կանոն դուրս է գալիս «ճանապարհից»:

Հարցազրույցների նյութերը ցույց տվեցին, որ սովորաբար մարզային փոքր բժշկական կենտրոններում սեռով պայմանավորված արքրուներ չեն իրականացվում, մասնակիցների կարծիքներով տեղական բժշկական այն կենտրոններում, որտեղ հնարավոր է արքրտ իրականացնել, այն իրականացնում են գաղտնի, առանց գրանցման, երեկոյան ժամերի կամ ոչ աշխատանքային օրերի՝ բժիշկներին վճարելով 15-30.000 դրամ, լրացուցիչ ավելացնելով 10.000-ական դրամ 12-շաբաթից հետո յուրաքանչյուր շաբաթվա համար: «*Գնաց Երևան, հանեց, եկավ*» բանաձևը ներկայացվում էր ավելի տարածված պրակտիկա՝ սեռով պայմանավորված հղիության ընդհատումների համար: Որոշ դեպքերում երևանյան բուժ. հաստատությունները առաջարկում են համակցված ծառայություններ՝ սեռի ստուգում և ուղեկցող արքրտ՝ անցանկալի սեռի պտղի դեպքում: Այս տարբերակը ըստ էության ավելի հարմարավետ է հատկապես մարզային հղիների դեպքում, քանի որ խնայում է լրացուցիչ ժամանակ և ջանքեր՝ նոր միջավայրերում և քաղաքում կողմնորոշվելու և արքրտ իրականացնելու համար:

Կանանց ֆիզիկական և հոգեբանական վիճակը սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներից հետո առանձնապես չի կարևորվում, ամեն դեպքում այս մասին որևէ մտահոգություն չի հնչեցվել հետազոտական հարցադրումներին ի պատասխան: Թե ինչպես են կանայք անցնում այս ճանապարհով, ինչ ֆիզիկական և հոգեբանական մարտահրավերների առջև են կանգնում, հարցեր են, որոնք կարիք ունեն լրացուցիչ հետազոտության և հանրայնացման: Կանայք հնարավորինս շուտ և աննկատ վերադառնում են առօրեականություն՝ սկսելով սպասել հաջորդ «իրական տղային»:

Հետահայաց դիտարկումներ.

Տղան պարտադիր ա, աղջիկն՝ անհրաժեշտություն

Ցանկացած հետազոտության իրականացում անուղղակիորեն հանդիսանում է մասնակցային գործիք ու հարթակ հետազոտության խնդիրներին ու նպատակներին անդրադարձի հնարավորությամբ: Այս հետազոտությունը ևս: Մասնակիցները, ովքեր միգուցե հնարավորություն չէին ունեցել քննարկելու տղա երեխայի նախընտրության հարցադրումները իրենց առօրեական պրակտիկաներում, հետազոտության ընթացքում

նեֆլեքսիայի միջոցով բացահայտում էին խնդրի հետ կապված օրինաչափություններ և միտումներ: Հատկապես բուժանձնակազմի ներկայացուցիչները, ովքեր հարցադրումների սկզբում որպես կանոն դիտարկում էին ներկայացնում, թե խնդիրն ուժեղացված է, նպատակ ունի շեղել հասարակության ուշադրությունը, անպտղությունը ավելի սարսափելի ցուցանիշներ ունի, քանի արու զավակի նախընտրության խնդիրները, քննարկումների ավարտին ամեն դեպքում խոստովանում էին, որ այո, խնդիրն առկա է:

Միաժամանակ, հատկապես միջին տարիքից բարձր մասնակիցները վերարժևորելով իրենց կյանքի պրակտիկաները, բարձրաձայնում էին արու զավակի նախընտրության մշակութային սովորույթների ոչ ուացիոնալ լինելը:

Հատկապես մարզերում առկա աղքատության, տղամարդկանց արտագնացության բարձր ցուցանիշների պարագայում նշում էին, որ միգրացե արդեն իսկ երեխայի սետը չի պայմանավորում ծնողների ապահով կյանքը. «Հըմի երկիրն ընենց ա, որ աղջիկ ունեցողն էլ ա մենակ մնում, փղա ունեցողն էլ, լրիվ էլ Ռուսաստան են... (Գանձաքար)

Կամ

«Ես մի աղջիկ ունեմ, փեզորս կինը ամբողջ կյանքում մեզ ծաղրում էր, թե ձեր յուրդը /փունը/ ո՞ւմ ա մնալու: Ինքն էլ փղաներ ուներ, հիմի է-է, դուռը փակ, վրան էլ մի մեծ բանալի, սաղ Ռուսաստան են... (Կին, Իջևան)

Հատկապես տարիքով ծնողների համար խնամքի անհրաժեշտությամբ պայմանավորված ավելի են կարևորում աղջիկների հոգատարությունն ու խնամքը.

«Դե ճիշտ ա, փղայի վրա ա թաղելը, վրեն քար քաշելը... Բայց դե հրմի աղջիկներն ավելի պարասիանաստուն են, քան փղաները; Աղջիկս օրեկան զանգում ա, հարցնում՝ հաց կերել է՞ք: Իսկ փղեն կարող ա հրըցնի էլ ոչ սաղ եք, թե մեռած»: (Կին, Իջևան)

Ստացվում է, որ տղաբերքի ճանապարհի սկզբում բարձրացված «փան ծուխը ծխելու, դուռը բաց պահելու, մի բաժակ ջուր փայլու» ակնկալիքները տարիների հետվից վերափոխափոխվելով ամփոփվում են գանձաքարի տիկին Ամալյայի բանաձևում «**Տղան պարտադիր ա, աղջիկը՝ անհրաժեշտություն»:**